

ՄԱՅԻՍ 28-Ի ԽՈՐՀՈՒՐԴԸ

1918թ. մայիս... Վեց դարերի խավարի վրա հառնում էր Եռագույնը՝ խորհրդանշելով հայոց պետականության վերածնունդը:

1918-ի մայիսյան պատմական ճակատամարտերով հայությունը վերստին հաստատեց իր հարատևելու կամքը՝ առաջ բերելով նույնիսկ թշնամու ակնածանքը:

Մայիս 28-ը սերունդներին փոխանցեց այն խորհուրդը, թե հաղթանակը վերջնական է, եթե մշտաբուն է ինքնիշխանության բնագույնը, եթե ներդաշնակ են գործում զենքն ու դիվանագիտությունը, եւ միասնական են ժողովուրդն ու իր ղեկավարությունը:

Ցավոք, այս խորհուրդները մենք հաճախ մոռացության ենք տալիս: Հայության մոտ թուլացել է ինքնիշխան լինելու, իր հաղթանակներին տեր կանգնելու կամքը: Արցախյան պատերազմում հաջողություններն ու մեր ժողովրդի այսօրվա պահվածքը աններդաշնակ են: Արտաքին սպառնալիքի հանդեպ մենք կարծես կորցրել ենք զգոնությունը՝ փոխարենը մեր եռանդը վատնելով դրսից հրահրվող ներքին պայքարներում:

Բայց արտաքին վտանգը եւ ազգի ճակատագրի խնդիրը, ինչպես 1918-ի մայիսին, կարող են համախմբել մեզ՝ անկախ քաղաքական համոզումներից, սոցիալական դիրքից ու աշխարհում գտնվելու վայրից:

Եվ նրանք, ովքեր մտահոգ են մեր ապագայով ու ելքեր են փնտրում, թող վերստին հաղորդակցվեն Մայիս 28-ի խորհրդին եւ անկեղծորեն գործեն՝ մեր ներքին միությունը վերահաստատելու եւ հնարավոր արտաքին վտանգին հավաքականորեն դիմակայելու համար:

ԱԶԳԸ ԵՎ ՆՐԱ ՍՏՎԵՐԸ

Ռուբեն Խուրշուդյան

«Ազգի ստվեր»-ի գաղափարն առաջ է քաշել անվանի հոգեվերլուծաբան Կարլ Գուստավ Յունգը: Ըստ գիտնականի, դա «այն բոլոր անհրապույր որակների հանրագումարն է, որոնք մենք գերադասում ենք թաքցնել»: Պարունակելով այն բոլոր հոգեբարոյական հատկանիշները, որոնց առկայությունը ազգային գիտակցությունը բնականորեն չի ընդունում, ստվերը ենթարկվում է գիտակցությունից դուրսմղման եւ թաքցվում է ազգի ենթագիտակցությունում, որտեղ արմատանում է, խորանում եւ ծավալվում:

Ինչպես յուրաքանչյուր ազգ, հայերը նույնպես ունեն իրենց ստվերը: Այդ ստվերի կարեւոր գումարելին է ժխտողականությունը: Ժխտողականության դիպուկ բնորոշումը տրվել է Ֆրիդրիխ Նիցշեի կողմից. «ժխտողականություն նշանակում է, որ արժեզրկվում են բարձրագույն արժեքները»: Ժխտողականությունը բացառում է ինչպես համամարդկային, այնպես էլ առանձնահատուկ ազգային հոգեբարոյական նորմերը, սկզբունքները, տեսլականները, չի ընդունում որեւէ հեղինակություն:

Ժխտողականությունը լուրջ վտանգ է ներկայացնում հայ ազգային-պետական օրգանիզմի համար. համաշխարհային պատմությունն ունի մեծ թվով օրինակներ, թե ինչպես է ժխտողականության թույլը քայքայել ամբողջ հասարակություններ եւ քաղաքակրթություններ:

Հայ ժխտողականությունը խեղաթյուրված ազատական աշխարհայացքի ծնունդ է: Ազատականությունը՝ որպես աշխարհայացք, անցնելով զարգացման երկար ճանապարհ, աստիճանաբար բյուրեղացավ որպես բարոյական պատասխանատվության բեռը կրող ազատ անձի գաղափար: Ըստ վերջինիս, *մարդու ազատությունը եւ նրա պատասխանատվությունը սեփական ազգի նկատմամբ անքակտելի են*: Այս առումով, հետաքրքիր է Ցեղակրոնության ընթացումը անձի ազատության վերաբերյալ: Ըստ այդմ, անձի ազատությունը չպետք է հակադրվի ազգի շահերին ու բարոյականին, բայց միաժամանակ նրան պետք է տրվի այնքան ազատություն, որպեսզի նա կարողանա լիարժեքորեն դրսևորվել՝ կատարել իր պարտքը ազգի նկատմամբ:

Սակայն ազատական աշխարհայացքը մեզ հրամցվեց նենգափոխված, որպես ազատություն՝ *առանց պարտքի զգացումի*: Հայ հասարակության բարոյահոգեբանական ազատականացումը բերեց ազգային արժեքներից, ավանդույթներից հրաժարման, քանզի վերջիններս պարտավորեցնող էին, իսկ նյութապաշտ-սպառողական, ամեն գնով հարստանալու ու վայելելու գիտակցությունը զերծ է պարտավորություններից եւ պարտքի զգացումից:

Արդյունքում վեր հառնեց ժխտողականությունը, որի գործառնության հետևանքով սկսեց ոչնչացվել հեղինակությունների հայ ավանդական հաստատությունը (ինստիտուտը): Հեղինակությունների գոյությունը այն անհրաժեշտ գործոնն է, որը միահյուսելով ազգի անցյալը, ներկան եւ ապագան՝ ապահովում է նրա զարգացման շարունակականությունը եւ հաջորդայնությունը:

Առաջին հերթին հերքվեց Աստծո հեղինակությունը, որով անտեսվեց եւ հեղինակագրվեց նաեւ նրա ավետած բարոյական արժեհամակարգը: *«Նախանձ, թշնամանք, չարություն. այս մութ ուժերը գործի են անցնում, հենց որ քուն է մտնում **Աստվածայինը** հասարակության մեջ»*, - զգուշացնում էր Գարեգին Նժդեհը: Անձը զրկվեց վարքականոնային «զսպանակներից», հասարակությունում գերիշխեց բարոյական ամենաթողությունը: «Կյանքի գերագույն նպատակը հաճույքն է», «Բռնիր պահը», «Արա, ինչ ուզում ես» կարգախոսները դարձան մեր ժամանակի նշանախոսքերը: Այսպիսով, սեփական ես-ը ամեն ինչից վեր դասելու գաղափարը դարձավ կյանքի հրամայական:

Հերքվեց ազգային պետության հեղինակությունը: Համաձայն հայ ավանդական աշխարհայացքի, ազգային պետությունը երկնային կամքի երկրային դրսեւորումն է: Այդ իսկ պատճառով անհատը, հասարակությունը պիտի ենթարկվեն պետությանը: Պետության հեղինակությունը չպիտի կախված լինի խմբային եւ անհատական շահերից: Միայն ազգային պետական կառույցը կարող է զսպել վերջիններիս եսասիրությունը եւ ծառայեցնել նրանց ազգային տեսլականի (իդեալի) իրագործմանը: Եվ քաջ գիտակցելով իրենց համար անբարենպաստ այդ իրողությունը՝ եսակենտրոն խմբերն ու անհատները պայքար են մղում ինչպես ազգային պետության, այնպես էլ ազգային տեսլականի դեմ:

Ազգային տեսլականը նույնպես ունի երկնային բնություն: Արարչի տիեզերական ծրագրում յուրաքանչյուր ազգին տրված է համապատասխան գործառույթ (առաքելություն): Այդ գործառույթին համապատասխանելու հավերժ ձգտումը կազմում է ազգային տեսլականի էությունը: Այն ազգը, որն ունի նման ձգտում, գիտի ինչ է անում եւ հանում ինչի է անում: Ժխտել ազգային տեսլականի հեղինակությունը, նշանակում է՝ բացառել ինքը ազգը: Եվ քանզի ազգային տեսլականն ունի վերանհատական բովանդակություն ու նախատեսում է անշահախնդիր ծառայություն եւ զոհողություններ, ապա այն ներկա պայմաններում դարձել է թիրախ ազգային խղճից «ազատականացածների» համար:

Արժեզրկման է ենթարկվել ազգային բանակի հեղինակությունը: Ավանդական հայ հասարակությունում ռազմի մարդը միշտ ունեցել է անհերքելի հեղինակություն: Ազգը, որը դարեր շարունակ սեփական մաշկի վրա է զգացել արտաքին վտանգը, տեսել է ջարդեր, չի կարող չհարգել ազգային բանակը՝ իր անվտանգության երաշխավորին: Իզուր չի ասված Ցեղակրոնության հավատամքում, որ ցեղակրոնը պաշտամունք

ունի իր ցեղի մարտական ուժի հանդեպ: Սակայն մեզանում ծավալվող աշխարհայացքային «ազատականացումը» կարող է եւ արժեզրկել Հայրենիքի պաշտպանության սրբազան պարտքի գաղափարը: Մեր օրերում բանակային ծառայությունից խուսափելը ընդունել է տազնապալից չափեր եւ դարձել ոչ թե պարսավանքի, այլ ընդհակառակը՝ պարծանքի առարկա:

Ազգային բանակի հեղինակության անկմանը զուգընթաց տեղի ունեցավ հերոսների հեղինակագրկումը: Հերոսը մշտապես սխրանք գործելու միտված, ինքնազոհության պատրաստ անձնավորություն է, որն իր վրա վերցնելով ազգային գերխնդիրների լուծման գործը՝ ստանձնում է պատասխանատվության եւ պարտականության չափազանց մեծ բեռ: «Ճշմարիտ հերոսականը տեղի ունեցավ այն օրը,- գրում է Նժդեհը,- երբ մարդը սովորեց եւ սիրեց գիտակցորեն գործել, տառապել ու մեռնել իր հայրենիքի համար»: Այսօր գերիշխող, եսասիրական նյութապաշտությանը միտված զանգվածային գիտակցությունը ժխտում է հերոսականությունը՝ որպես իրեն հակադիր երեւույթ: Հատուկ ծաղրանքի առարկա են դարձել սխրանքը, խիզախությունը, հանուն Հայրենիքի կյանքը զոհաբերելու պատրաստականությունը: Հերոսները դատափետվում եւ ցած են նետվում իրենց հոգեւոր պատվանդաններից:

Հեղինակագրկվեց պատմությունը՝ գիտականորեն կանոնակարգված պատմական հիշողությունը: Ըստ ավստրիացի գիտնական Վոլֆգանգ Կրաուսի, պատմությունը «բացում է հնարավորություն մղելու մեր կանքը տեսլականի ուղղությամբ եւ ջանքեր ձեռնարկելու՝ նրան մոտենալու համար»: Ոչ առանց դրսի միջամտության՝ մեզանում պատմությունը ենթարկվեց խեղման, փորձ արվեց ջնջել ազգային ոգին սնող պատմական հիշողության կարեւորագույն հանգույցները: Հրամցվեց արատավոր գաղափար, որ հայերը քաղաքակրթական նվաճումների հասնելու եւ բարձր պատմական կոչման արժանանալու շանս չունեն:

Պատմական հիշողության անլացումն անխուսափելիորեն բերեց ավանդույթների հեղինակագրկմանը: Ավանդույթները անցյալի եւ ներկայի հոգեմտավոր կապերն են, որ ապահովում են ազգի ինքնության պահպանումը, վերարտադրումը: Նշյալ համակարգի կարեւոր բաղադրամասերն են մշակույթը, կրթությունը եւ գիտությունը. հոգեմտավոր երրորդություն, որի դերը հայ ժողովրդի ճակատագրում դժվար է գերազնահատել: Անցյալում հենց այդ երրորդության որակները կրող անձինք էին հայ հասարակության նեցուկը: Երկրի, օջախի մեծերը՝ կարեւոր որոշումներ կայացնելիս, առաջին հերթին խորհուրդ էին հարցնում այդպիսի մարդկանցից: Այսօր հոգեւոր կամ մտավոր կյանքով ապրող մարդը համարվում է արդի պայմաններին ոչ պիտանի եւ ժամանակավրեպ:

Հեղինակությունների սրընթաց փլուզման ժամանակաշրջանում անկում ապրեց նաեւ տան մեծի հեղինակությունը: Մեծը՝ որպես գերդաստանի պատմական հիշողության կրող, տոհմի առանձնահատուկ ավանդույթ-

Ների պահապան եւ փոխանցող, կորցրել է իր գործառնությունը: Հայ հասարակությունում արմատավորում է գտել մեր ժողովրդին բացարձակապես անհարիր արհամարհական վերաբերմունք օջախի մեծի նկատմամբ, որի «մեղքն» այն է, որ ապրելով ազնիվ, արդար եւ արժանավայել կյանք՝ չի վաստակել ծերությունն ապահովող անհրաժեշտ միջոցներ եւ «դարձել է բեռ»: Այդ խայտառակ երեւույթը ազգային անկման ամենաչարագույժ նշաններից է:

Այսպիսիք են, ընդհանուր գծերով, ժխտողականության քայքայիչ հետեւանքները հայ իրականությունում: Դրանց վերացման ճանապարհին՝ որպես գերխնդիր նշմարվում է համընդհանուր ազգային պատասխանատվության բարձրացումը: Այդ գործընթացի շարժիչ ուժը կարող է հանդիսանալ ազգային հոգեւոր ընտրանին: Հոգեւոր ընտրանի ասելով նկատի ունենք անձանց, որոնք օրգանապես զգում են երկնայինի եւ երկրայինի ներդաշնակությունը եւ գիտակցում են, որ բացարձակ ճշմարտության բովանդակությունը **Արարիչն** է, դրսեւորման ճշմարիտ ձեւ՝ **Ազգը**: Միայն այդպիսի մարդկանց շնորհիվ կարելի է կերտել իսկապես *ազգային պետություն եւ հասարակություն*, այդպիսի մարդկանց միջավայրում կարող է ձեւավորվել համազգային առաջնորդ, որի հոգեւոր եւ բարոյական նկարագիրը կունենա իրապես խարիզմատիկ բնույթ: **Հոգեւոր ընտրանի, խարիզմատիկ առաջնորդ, ազգային պետություն եւ հասարակություն**՝ սրանք են, մեր կարծիքով, փրկարար դարմանի բաղադրամասերը:

Ժամանակակից աշխարհի ճգնաժամի հիմնական դրսեւորումներից է այն, երբ ազգի ստվերը ստվերում է ինքը՝ ազգը: Գոյություն ունի դրան դիմակայելու միայն մի ուղի, որը հիմնված է հետեւյալ բնագանգական (մետաֆիզիկական) օրենքի վրա՝ *ինչքան վառ է ազգի հոգու լույսը, այնքան փոքր եւ աննշան է նրա ստվերը*: Բնագանգական օրենքներն ունեն մի առանձնահատկություն. դրանք կասկածի չեն առնվում եւ չեն քննարկվում, դրանց ուղղակի հավատում եւ հետեւում են:

**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՇՈՒՐՋ
Չրանտ Տեր-Աբրահամյան**

Համաշխարհային ներկա միտումներն ու աշխարհաքաղաքական նոր զարգացումները հանգեցրել են «ազգային պետություն» գաղափարի վերաիմաստավորմանը: Այսօր արդեն առկա են ազգային պետության՝ որպես տվյալ տարածքի բնակչության անվտանգության երաշխավորի, դերակատարման նվազեցումը եւ, առհասարակ ազգային պետությունների ինքնիշխանության աստիճանի անկումը:

Բացի այդ, նախկին կենտրոնացված կառույցները զիջում են իրենց տեղը ապակենտրոնացված կամ բազմակենտրոն տիպի կառույցներին, նաեւ այն պատճառով, որ կենտրոնացված կառույցները ներկայումս ի զորու չեն կատարել իրենց վրա դրված գործառույթները, ապահովել անհրաժեշտ ճկունությունը եւ պատասխանների համարժեքությունը արագ փոփոխվող մարտահրավերներին:

Այս ամենից բացի, գոյություն ունի ազգային իրականությունը:

Այն կայանում է նրանում, որ, չնայած Հայաստանի Հանրապետության գոյությանը, վերջինս չի միավորում եւ, զանազան պատճառներով, ի զորու չէ միավորել բոլոր հայերին իր տարածքում կամ իր հովանու ներքո: Հայերի մեծամասնությունն ապրում է հանրապետությունից դուրս, եւ տեսանելի հեռանկարում այդ իրավիճակը փոփոխության ենթակա չէ: Նույնիսկ զուտ ֆիզիկապես Հայաստան պետությունն իր ներկա տարածքով չի կարող բնակչության վայր դառնալ բոլոր հայերի համար: Այն՝ իբրեւ Հայրենի հողի վրա հաստատված քաղաքական կառույց, իհարկե մնում է որպես ձգողական կենտրոն եւ որպես ազգային մեծ արժեք, սակայն ակնհայտ է, որ հայության՝ որպես հավաքականության, խնդիրների ողջ սպեկտրը չի կարող լուծելի դառնալ միայն հայկական պետության միջոցով:

Մյուս ազգային իրականությունն այն է, որ առկա են երկու հայկական պետություն, երկու կաթողիկոսություն, երկու գրական լեզու (չհաշված եկեղեցական ծեսերում դեռեւս կենդանի գրաբարը) եւ այդօրինակ այլ «երկվություններ», որոնք հետեւանք են պատմական զանազան զարգացումների: Մեզանում այս երեւույթները փաստացիորեն դիտարկվում են որպես միայն բացասական, վերջնական հեռանկարում վերացման ենթակա: Վեճերն ընթանում են այն բանի շուրջ, թե երբ եւ ինչ միջոցներով են վերացվելու: Սակայն եթե հարցին մոտենանք առանց վերոհիշյալ կաղապարների, ապա նախքան «ինչպես վերացնելու» քննարկումը, հարց կտանք. արդյո՞ք արքսիոն է, որ դրանք միանշանակ բացասական

երեւույթներ են եւ միայն ժամանակավորապես են հանդուրժելի: Մեր կարծիքով՝ պատասխանը միանշանակ չէ: Վերոնշյալ «երկվությունն» իհարկե ունի իր բացասական կողմերը, սակայն միայն դրանցով չի սահմանափակվում, եւ փոխանակ անպտուղ ձգտմանը՝ փոխել իրականությունը հանուն դոգմաների, առավել ձեռնտու է այն օգտագործել իր դրական կողմերով:

Այսօր շատերն են խոսում այն մասին, որ արդի աշխարհում առաջնային պլան են մղվում այսպես կոչված ցանցային, ապակենտրոնացված կառույցները: Ցանցային կառույց հասկացությունը տարածվում է ամենատարբեր ոլորտների վրա՝ տեխնոլոգիաների, միջազգային, վերազգային ու տեղական կազմակերպությունների եւ այլնի վրա: Որոշակի վերապահումներով՝ այն կարելի է տարածել եւ ազգային միավորների վրա՝ առաջին հերթին այն ազգերի, որոնք ունեն մեծ սփյուռք: Այս առումով, հրեությունը համաշխարհային, ցանցային կառույց է, որը այդպիսին է շատ ավելի վաղ ժամանակներից, քան այդ հասկացությունը մոդայիկ է դարձել: Հայերին էլ անծանոթ չէ ապակենտրոն կառույցը (օրինակ՝ Դաշնակցության մոտ): Փաստորեն, ցանցային կառույցները բնական են համաշխարհային սփռվածություն ունեցող ազգերի համար:

Որո՞նք են ցանցային կառուցվածքի առավելությունները ազգային տեսանկյունից: Ֆունկցիոնալ առումով ապակենտրոնացված կառույցը ավելի ճկուն է եւ արագ փոփոխվող պայմաններում կարող է ավելի համարժեք պատասխանել մարտահրավերներին: Բացի այդ, աննպաստ պայմաններում այն առավել կենսունակ է. օրինակ՝ որեւէ կենտրոնի ոչնչացման դեպքում համակարգը պահպանվում է, քանի որ մյուս կենտրոնները ինքնավար են: Տարբեր կենտրոնները կարող են զանազան դերակատարություն ունենալ թե՛ համակարգի ներսում, թե՛ արտաքին աշխարհի հետ հարաբերությունում: Այն, ինչ չի կարող անել մեկը, անում է մյուսը: Մեր դեպքում, օրինակ, հարաբերությունների այն տիպը, որ զանազան պատճառներով չի կարող իր վրա վերցնել էջմիածինը, կարող է կատարել Անթիլիասը. նույնը կարելի է ասել ՀՀ–ԼՂՀ, Պետություն–Դաշնակցություն եւ նման այլ զույգերի համար: Իհարկե, այս ամենը այն պարագայում, երբ զանազան կենտրոնները միմյանց հանդեպ ոչ թե թշնամաբար են տրամադրված եւ պայքարում են առաջնայնության համար, այլ գործում են մեկ դաշտում:

Ժամանակակից ազգաբանության մեջ էլ այն հոսանքը, որ ներկայացնում է Լ. Գումիլեւի դպրոցը, շեշտում է, որ էթնիկ համակարգում բազմաթիվ ենթահամակարգերի առկայությունը վկայում է դրա ծաղկուն շրջանում գտնվելու, իսկ ենթահամակարգերի ունիֆիկացումը՝ էթնոսի անկման շրջանի մասին:

Համաշխարհային հայությունն, իհարկե տարերայնորեն, ունի ցանցային, ապակենտրոնացված կառուցվածք: Խնդիրը սակայն այն է, որ այդ տարերային կառուցվածքին տրվի կազմակերպված ձեւ եւ բովանդակու-

թյուն: Այսինքն՝ այն գիտակցվի ոչ միայն որպես մերկ իրականություն, այլ՝ որպես ազգային զարգացմանը եւ կենսունակությանը նպաստող հանգամանք: Այսինքն՝ այն, ինչ թվում է թերություն, օգտագործվի որպես առավելություն:

Հայոց պատմության ժամանակակից փուլի սուբյեկտը պետք է հանդիսանա ոչ միայն Հայաստանի Հանրապետությունը, այլեւ *համաշխարհային հայությունը, հայությունը* ոչ միայն որպես *հայեր* բառի հոմանիշ, այլ որպես օրգանական կառույց: Իրապես հայերը համաշխարհային ազգ են, սակայն չկա դրա գիտակցվածությունը, դրա տեսական ըմբռնումը: «Համաշխարհային ազգ» բառակապակցությունը մեզ համար զուտ այն բանի խորհրդանիշն է, որ Հայաստանի զավակները ցրված են աշխարհով մեկ, բայց այդ հասկացությունը, իրականության փաստումից բացի, դեռ չունի ոչ մի այլ բովանդակություն՝ գաղափարախոսական, քաղաքական եւ այլն:

Ըստ այդմ, ազգային պետության կառուցմանը զուգահեռ, պետք է դրվի եւ հայության համաշխարհային կազմակերպվածության խնդիրը, ինչը ենթադրում է, բացի պրակտիկ գործունեությունից, նաեւ տեսական հիմքի ապահովում: Վերջինս իր մեջ պետք է պարունակի մի շարք հարցերի պատասխաններ: Այդպիսի հարցերի օրինակներից են.

– որպես համաշխարհային ազգ՝ արդյո՞ք հայերն ունեն նաեւ համաշխարհային առաքելություն, բացի զուտ ազգային նպատակից,

– ինչպիսի՞ նպատակներ պետք է ունենան հայերը իրենց ապրած երկրներում, ինչպե՞ս պետք է համատեղվեն ազգային եւ քաղաքացիական շահերն ու պարտականությունները,

– ինչպե՞ս կազմակերպված ձեւով օգտագործել այլ երկրներում հայերի ազդեցությունը՝ ի նպաստ համահայկական շահերի:

Այս կարգի բազմապիսի հարցեր կան, որոնց պատասխանները մեր քաղաքական եւ մտավոր ընտրանու քննարկման առարկան պետք է դառնան:

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ

Գազիկ Տեր-Հարությունյան

Իրաքյան արագընթաց պատերազմը մեկ անգամ եւս ցուցադրեց աշխարհին Միացյալ Նահանգների ռազմական գերիզորությունը եւ էլ ավելի ամրապնդեց նրա դիրքերն աշխարհում: Ներկայումս այդ տերությունը փորձում է առավելագույնս օգտագործել ձեռք բերած ռազմական եւ քաղաքական նվաճումները, որպեսզի ճնշում գործադրի իր վարած քաղաքականության դեմ արտահայտվող երկրների հանդեպ եւ հաստատի իր մենատիրությունը: Իրենց հերթին «անհամաձայն» երկրները ձեւավորում են ռազմաքաղաքական դաշինքներ, որոնք ակնհայտորեն միտում ունեն դիմակայելու ամերիկյան էքսպանսիային: Միեւնույն ժամանակ, այս ամենին զուգահեռ, առկա են լուրջ խնդիրներ ԱՄՆ ներքին տնտեսական իրավիճակում:

ԱՄՆ տնտեսական վիճակը

Համաձայն ամերիկյան վերլուծաբանների, իրաքյան պատերազմից հետո ԱՄՆ-ում սպասվում էր տնտեսության զգալի աճ: Այդ կանխատեսումները հիմնված էին նախկին դիտարկումների վրա. ոչ միայն առաջին իրաքյան եւ հարավսլավական, այլ անգամ վիետնամական (երբ ԱՄՆ-ը պարտություն կրեց) պատերազմներից հետո, շնորհիվ ռազմաարդյունաբերական համալիրի ակտիվացման, ԱՄՆ տնտեսությունը զգալի վերելք էր ապրել: Սա որոշ տնտեսագետների անգամ հիմք էր տալիս ենթադրել, որ Իրաքի դեմ պատերազմի գլխավոր դրդապատճառը ԱՄՆ տնտեսության բարելավումն էր:

Սակայն, համաձայն վիճակագրական տվյալների, այդ լավատեսական սպասումները առայժմ չեն իրականանում: Դոու-Ջոնսի բորսային ցուցանիշը (որն արտահայտում է ԱՄՆ խոշորագույն ձեռնարկությունների բաժնետոմսերի գների իրավիճակը) Բուշ-կրտսերի իշխանության տարիներին իջել է 8% եւ շարունակում է իջնել, իսկ ՆԱՉԴԱԲ-ի ցուցանիշը (որն արտահայտում է բարձր տեխնոլոգիաների ոլորտի ձեռնարկությունների բաժնետոմսերի գների իրավիճակը) իջել է 11%: Համեմատության համար նշենք, որ 1974 թվականից ի վեր այդ երկու ցուցանիշները տարեկան կտրվածքով շարունակաբար աճել են եւ երբեք չեն նվազել: Իջել է նաեւ այսպես կոչված ԱՄՆ ամենամայա արտադրական ցուցանիշը:

Տնտեսության նման անկումը բնութագրվում է որպես համակարգային, իսկ դրան զուգահեռ տեղի է ունենում ընդդիմադիր երկրների տնտեսության եւ մասնավորապես եվրոյի ամրապնդում: Այս երևույթները թելադրում են ԱՄՆ-ին հարձակողական բնույթի տնտեսական միջոցներ

ծեռնարկել մասնավորապես իր այն մրցակիցների հանդեպ, ովքեր դեմ էին Իրաքի հանդեպ ռազմական ուժ կիրառելուն:

Պատժամիջոցներ Ֆրանսիայի նկատմամբ

ԱՄՆ ՊՆ նախարար Դոնալդ Ռամսֆելդի հրամանով կազմվել է մի ցուցակ, ուր ներկայացված են ԱՄՆ-ի հետ կապված Ֆրանսիայի բոլոր տնտեսական գործերը: Համաձայն այդ ցուցակի, կատարվել են մի շարք քայլեր՝ ուղղված ֆրանսիական տնտեսական շահերի դեմ: ԱՄՆ-ը արդեն իսկ խզել է մի շարք պայմանագրեր ֆրանսիական ընկերությունների հետ, նրանք զրկվելու են իրենց նավթային պայմանագրերից Իրաքում եւ չեն մասնակցելու Իրաքի վերականգնման աշխատանքներին:

Նշենք, որ մինչեւ 1991թ. առաջին իրաքյան պատերազմը Ֆրանսիան հանդիսանում էր Պարսից ծոցի երկրների սպառազինության հիմնական մատակարարը: Պատերազմից հետո Ֆրանսիան զիջեց իր դիրքերը ԱՄՆ-ին: Իսկ այժմ նա կարող է ընդհանրապես զրկվել այդ շուկայից: Բանն այն է, որ Իրաքում ամերիկացիները հայտնաբերել են ժամանակակից ֆրանսիական զենք, մասնավորապես հակատանկային հրթիռներ: Այսինքն՝ Ֆրանսիան կարող է մեղադրվել որպես Իրաքին զենք մատակարարելու մասին ՄԱԿ-ի էմբարգոն խախտած երկիր, իսկ այդ դեպքում ֆրանսիական ընկերությունների նկատմամբ կկիրառվեն միջազգային սանկցիաներ: Ի լրումն այս ամենի, ԱՄՆ ճնշման տակ Ֆրանսիան հրաժարվել է Իրանին վաճառել «Աերոբուս» տիպի 4 ինքնաթիռ:

Նկատենք, որ ԱՄՆ նման կարգի գործողությունները կարելի է բնութագրել որպես «տնտեսական պատերազմ», որն աստիճանաբար ընդունում է գլոբալ եւ շարունակական բնույթ: Այդ պատերազմում ԱՄՆ թիրախներից է Ռուսաստանը:

Տնտեսական պայքար Ռուսաստանի դեմ

Իրաքյան պատերազմի նկատմամբ բացասական մոտեցում ցուցաբերող երկրների հանդեպ պատժամիջոցներ պլանավորում եւ կիրառում է ոչ միայն ԱՄՆ-ը, այլ նաեւ միջազգային այն ֆինանսական կառույցները, որոնք աջակցում են տարածաշրջանում ԱՄՆ ռազմավարական դաշնակից Իսրայելին եւ հրեականությանն ընդհանրապես: (Այս առիթով տեղին է նշել, որ սենատոր Ջո Լիբերմանը, արդեն ունենալով 23% վարկանիշ, համարվում է հիմնական հավակնորդներից մեկը 2004թ. նախագահական ընտրություններում):

Վերոհիշյալ իրողությունների ենթատեքստում պետք է դիտարկել այն փաստը, որ նախագահ Բուշը եւ ԱՄՆ Կոնգրեսը կասեցրել են Ռուսաստանի հետ առեւտրում խտրականություն դնող «Ջեքսոն-Վենիկի ուղղումի» վերացմանը տանող գործողությունները: Այդ «ուղղումն» ընդունվել էր 1974թ., ի պատասխան ԽՍՀՄ խոչընդոտումներին՝ դեպի Իսրայել հրեա-

ների ազատ ներգաղթելուն: Ի դեպ, «ուղղման» վերացման մասին համաձայնություն արդեն իսկ ձեռք էր բերվել Պուտին-Բուշ հանդիպման ժամանակ:

ԱՄՆ այս քայլը անթաքույց պայմանավորված է Իրաքի հարցում Ռուսաստանի դիրքորոշմամբ: Ավելին, համաձայն պաշտոնական Վաշինգտոնի կարծիքն արտահայտող «Պաշտպանության տեղեկատվական կենտրոնի» մեկնաբանման, «Ռուսաստանը այլևս այն երկիրը չէ, որի հետ ԱՄՆ-ը պետք է հատուկ հարաբերություններ սահմանի եւ գնա նրան ընդառաջ»: Նկատենք, որ առանց «Ջեքսոն-Վենիկի ուղղման» վերացման՝ Ռուսաստանը գործնականում չի կարողանալու ընդունվել Առեւտրի համաշխարհային կազմակերպություն:

Չուզահեռ՝ Ռուսաստանում կատարվում են տնտեսական գործընթացներ, որոնք թվում է թե կապ չունեն այդ երկրի՝ Իրաքի հարցի նկատմամբ քաղաքական դիրքորոշման հետ, բայց իրականում հանդիսանում են Ռուսաստանի դեմ վարվող տնտեսական պատերազմի տրամաբանական շարունակությունը:

Դեռ փետրվարին Ռուսաստանի էներգակիրների շուկայում խոշոր ներդրումներ կատարեց «Բրիթիշ Փեթրոլեում» (BP) ընկերությունը, որի տնտեսական գործունեությունը ուղղակիորեն կապված է ամերիկաբրիտանական ռազմավարության հետ: Մասնավորապես այն հայտնի է որպես Բաքու-Ջեյհան նավթամուղի գլխավոր դերակատար: Վճարելով \$6,75 մլրդ՝ BP-ն դարձավ THK-BP համատեղ ընկերության 50% բաժնետոմսերի սեփականատեր: Սա լուրջ մտահոգություն պատճառեց ռուսաստանյան իշխանություններին, քանի որ Ռուսաստանի պետական բյուջեի մի զգալի մասը ձեւավորվում է էներգակիրների վաճառքից հարկվող գումարներից: Կիսով չափ օտարերկրյա THK-BP-ի հայտնվելը շուկայում փաստորեն պետությունը կախման մեջ է դնում այդ ընկերությունից:

Նկատենք, որ մինչ THK-BP-ի հայտնվելն էլ Ռուսաստանի իշխանությունները լուրջ խնդիրներ ունեին օլիգարխական կապիտալին պատկանող նավթային բիզնեսի հետ: Ավելին, համաձայն տնտեսագետների կանխատեսումների, նախագահ Պուտինը 2004թ. վերընտրվելու դեպքում փորձելու է էապես մեծացնել պետության ազդեցությունը կենսական նշանակություն ունեցող նավթային ընկերությունների վրա: Սակայն Պուտինի մտադրությունների դեմ, ըստ ամենայնի, ներկայումս լուրջ արգելքներ են դրվում:

Վերջերս իրենց միավորման մասին հայտարարեցին երկու նավթային հսկաներ՝ «Յուկոս» եւ «Սիբնեֆտ» ընկերությունները: «ՅուկոսՍիբնեֆտ» նոր ընկերության նախագահն է լինելու «Յուկոս»-ի ղեկավար, Ռուսաստանի ամենահարուստ ձեռնարկատեր Մ. Խոդորկովսկին: Նա արդեն «Սիբնեֆտ»-ի (որի նախագահն է Չուկոտկայի մարզպետ Ռոման Աբրամովիչը) 20% բաժնետոմսերի համար վճարել է \$3 մլրդ: «ՅուկոսՍիբնեֆտ»-ը

կղաճնա Ռուսաստանի ամենահզոր ընկերությունը (նավթի օրական հանույթը՝ 2,3 մլն տ) եւ ամենայն հավանականությամբ՝ չորրորդն աշխարհում (այդ ցուցանիշով): Իրենց հերթին Shell եւ Total ընկերություններն են պատրաստվում գնել «ՅուկոսՍիբնեֆտ»-ի բաժնետոմսերը: Այսպիսով, «ՅուկոսՍիբնեֆտ»-ը վերածվելու է մի վերագալստի գերընկերության, որի վրա պետության կողմից վերահսկողություն սահմանելը գործնականում անհնարին կլինի: Ավելին, նման կառույցներն իրենք են իրենց վերահսկողության տակ առնում պետական կառույցները եւ զգալի դերակատարում ստանձնում քաղաքական դաշտում:

Միեւնույն ժամանակ «հետիրաքյան» զարգացումներն ընթանում են ոչ միայն «տնտեսական», այլ նաեւ, ըստ որոշ վարկածների, անգամ «կենսաբանական պատերազմների» ոլորտում:

Ոչ տիպիկ թոքաբորբը՝ որպես պատժամիջոց Չինաստանի դեմ

Որոշ վերլուծաբանների կարծիքով, Չինաստանում ի հայտ եկած ոչ տիպիկ թոքաբորբի համաճարակը ԱՄՆ հատուկ ծառայությունների կողմից կատարված քայլ է՝ ուղղված Չինաստանի դեմ եւ մասնավորապես պայմանավորված նրա՝ Իրաքի նկատմամբ եւ Հյուսիսային Կորեայի առիթով ունեցած հակաամերիկյան դիրքորոշմամբ: Որպես հիմնավորում բերվում են հետեւյալ փաստարկները:

– Այս տարվա սկզբին ազգին ուղղված իր ուղերձում նախագահ Բուշը նշեց, որ ԱՄՆ-ը ձեռնամուխ է լինում իրագործել \$6 մլրդ արժողության «Կենսաբանական վահան» ծրագիրը, համաձայն որի պետք է կատարվեն լայնածավալ հետազոտություններ համաճարակային շիճուկների մշակման եւ կենսաբանական զենքից պաշտպանվելու նպատակով: Ակնհայտ է, որ «պաշտպանության նպատակով» հետազոտությունները կարող են ենթադրել նաեւ աշխատանքներ կենսաբանական զենքի ուղղությամբ: Նշենք նաեւ, որ ԱՄՆ-ը (ի տարբերություն, օրինակ, Ռուսաստանի) չի ստորագրել կենսաբանական զենքն արգելող միջազգային կոնվենցիան: Ջորջ Բուշի այս հայտարարությունը հիմք տվեց մտածելու, որ 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո սիրիախտով վարակվելու դեպքերը եւ այդ առիթով ստեղծված խուճապը հրահրվել էին հենց այդ ծրագրի ֆինանսավորումն ապահովելու նպատակով:

– ԱՄՆ-ը օբյեկտիվորեն որպես իր «հիմնական հակառակորդ» Եվրասիայում ընդունում է Չինաստանին՝ վերջնական նպատակ ունենալով այդ տերության տապալումը: Այս մոտեցումը ամրագրված է ԱՄՆ ազգային անվտանգության համակարգին պատկանող կառույցների հրատարակած վերլուծական փաստաթղթերում եւ լիովին համապատասխանում է ԱՄՆ կողմից Կենտրոնական Ասիայում ներկայումս վարվող ռազմավարությանը:

– Հյուսիսային Կորեան այսօր փաստորեն միակ երկիրն է, որ հանդգնում է «միջուկային շանտաժի» ենթարկել ԱՄՆ-ին, եւ դա ընկալ-

վում է որպես Չինաստանի կողմից հրահրվող քայլ, քանի որ Հյուսիսային Կորեան գտնվում է Չինաստանի հովանու տակ:

– Ոչ տիպիկ թոքաբորբի համաճարակը սկսվեց իրաքյան պատերազմին զուգահեռ, ինչը համապատասխանում է «երրորդ սերնդի» տեղեկատվական պատերազմների հայեցակարգին, համաձայն որի *«պետք է էֆեկտներ առաջացնել մի տարածաշրջանում, իսկ հիմնական գործողությունները կատարել բոլորովին այլ տեղում»*: Եթե հարցը դիտարկենք այս տեսանկյունից, ապա ստացվում է, որ Իրաքի դեմ պատերազմի նպատակներից մեկն էր առաջացնել էֆեկտներ, որոնք կշեղեին ուշադրությունը հիմնական գործողություններից:

Վերոհիշյալ փաստարկները, որոնց ցուցակը կարելի է շարունակել, հիմք են ծառայում եզրակացնելու, որ ԱՄՆ-ը Չինաստանի նկատմամբ ձեռնարկել է «տեղեկատվական-կենսաբանական» գործողություն, որի նպատակներն են՝

– Վարկաբեկել Չինաստանին եւ հասցնել նրան առավելագույն տնտեսական վնաս (ներկայումս դադարեցվել են այդ երկրի հետ կնքված բազմաթիվ տնտեսական պայմանագրեր եւ ծրագրեր, իսկ չինական ապրանքները բոյկոտվում են ողջ աշխարհում:

– Հասնել զիջումների Հյուսիսային Կորեայի հետ կապված հարցերում:

Սակայն ԱՄՆ վերը բերված գործողություններն իրենց հերթին դրդում են պատասխան քայլերի:

Ռազմական դաշինքների ձեւավորում

Տեղեկանքի կարգով նշենք, որ Եվրամիության երկրների միասնական Համախառն ներքին արտադրանքի (ՀՆԱ) ծավալը համեմատելի է ԱՄՆ-ի ՀՆԱ-ի հետ, այսինքն՝ եվրոպական երկրները այնքան էլ չեն զիջում ԱՄՆ-ին իրենց տնտեսական բնութագրերով: Սակայն ԱՄՆ այս տարվա ռազմական ծախսերը կազմում են \$386.2 մլրդ, ինչը 2,5 անգամ ավելի է, քան ՆԱՏՕ-ի բոլոր երկրների ռազմական բյուջեները միասին վերցրած: Իսկ 2004թ. ԱՄՆ ռազմական ծախսերը աճելու են մինչեւ \$450.9 մլրդ, ինչը կազմելու է, ի դեպ, ԱՄՆ պետբյուջեի 17% եւ ՀՆԱ 3,5%-ը:

ԱՄՆ ռազմական անվերապահ առավելությունը այսօր այն որոշիչ գործոնն է, որը թելադրում է ամերիկյան ուժային, հարձակողական եւ նրա ընդդիմադիրների պասիվ, ինչ որ իմաստով կրավորական քաղաքականությունը: Միեւնույն ժամանակ ԱՄՆ վարած նման քաղաքականությունը փաստորեն հրահրում է եվրոպական երկրներին, ինչպես նաև Ռուսաստանին առաջնահերթ ուշադրություն դարձնել ռազմական հարցերին: Սակայն եվրոպական տերությունների՝ ՆԱՏՕ-ի ֆորմատում գտնվելը փաստորեն զրկում է նրանց այս ոլորտում որեւէ անկախ քայլ կատարելու հնարավորությունից:

Այս համատեքստում տրամաբանական պետք է համարել Ֆրանսիայի, Գերմանիայի, Բելգիայի եւ Լյուքսեմբուրգի այն հայտարարությունը, ըստ որի նրանք մտադիր են ստեղծել ՆԱՏՕ-ից դուրս ռազմական նոր կառույց: Ուշադրության արժանի է նաեւ այն փաստը, որ այդ երկրների՝ ռազմական դաշինք կազմելու մասին հայտարարությունը հանընկալ Դուշանբեում Յավաքական անվտանգության կազմակերպության վերակազմավորման հետ: Այդ կազմակերպության անդամներն են Ռուսաստանը, Բելառուսը, Հայաստանը, Ղազախստանը, Տաջիկստանը եւ Կիրգիզիան: Նոր կազմակերպությունը, ի տարբերություն նախկին՝ նման անվանումով կառույցի, ունի իր մշտական գործող Գլխավոր շտաբը եւ ղեկավարությունը:

Եվրոպայում եւ ԱՊՀ երկրներում կատարվող այս քայլերը գտնվում են նույն ռազմաքաղաքական համատեքստում եւ նպատակ ունեն ստեղծել հակազդեցության մեխանիզմներ ԱՄՆ վարած քաղաքականության դեմ: Ավելին, հաշվի առնելով Ռուսաստանի եւ Ֆրանսիայի մերձեցումը ռազմական ոլորտում, Մոսկվա – Բեռլին աշխարհաքաղաքական առանցքի տրամաբանությունը, ինչպես նաեւ այդ երեք երկրների ռազմական փոխլրացման հանգամանքը՝ կարելի է կանխատեսել, որ նոր ստեղծված ռազմական դաշինքները ձգտելու են իրագործել համատեղ եւ կոորդինացված ծրագրեր:

Նկատենք նաեւ, որ նման ռազմական դաշինքների կազմալուծումը ամերիկա-բրիտանական քաղաքականության հիմնական բաղադրիչն է Եվրասիայում: Հենց այս հանգամանքով էր պայմանավորված Թոնի Բլերի վերջին այցը Մոսկվա: Սակայն, դատելով մամուլում տեղ գտած տեղեկատվություններից, Բլերի առաքելությունը հաջողությամբ չի պսակվել, ավելին՝ նրա ավանդաբար լավ անձնական հարաբերությունները Պուտինի հետ խաթարվել են: Միեւնույն ժամանակ, ԱՄՆ-ը եւ Մեծ Բրիտանիան իրենց հերթին ձեռնարկում են պատասխան քայլեր ընդդեմ Փարիզ – Բեռլին – Մոսկվա առանցքի:

ԱՄՆ զինված ուժերի վերախմբավորում

Ինչպես եւ սպասվում էր, Իրաքի նոր վարչական կառուցվածքը բաղկացած է լինելու երեք մասից, որոնք իրենց մեջ ընդգրկում են շիա, սուննի եւ քրդական համայնքները: Սակայն նորություն էր այն տեղեկատվությունը, համաձայն որի այդ մասերից մեկի վերահսկումը կատարելու է Լեհաստանը (մնացած երկուսը ղեկավարելու են ԱՄՆ-ը եւ Մեծ Բրիտանիան): Նման քայլը բխում է դեռ անցյալ տարի ԱՄՆ պաշտպանության նախարարության մշակած նոր հայեցակարգից, համաձայն որի ամերիկյան զինված ուժերի զգալի մասը դուրս է բերվելու հիմնական զինակայանից՝ Գերմանիայից (որտեղ կա 80 հազարից ավելի ամերիկյան

զինծառայող) եւ վերաբաշխվելու է Արեւելյան Եվրոպայի երկրներում: Նշենք այս քայլի հիմնավորումներից մի քանիսը.

– Ապագա ռազմական գործողությունների թատերաբեմը ներկայումս գտնվում է դեպի ավելի արեւելք՝ դեպի Բելառուս, Ռուսաստան, Կենտրոնական Ասիա եւ Չինաստան:

– Գերմանիայում թափ հավաքող հակաամերիկյան տրամադրությունները կարող են հանգեցնել նրան, որ գերմանացիները մի օր ԱՄՆ-ից պահանջեն ազատել ռազմակայանները:

– Եվ ամենահիմնականը՝ ամերիկյան զինված ուժերի տեղակայումը *Արեւելյան Եվրոպայում նախապես «կտրատում» է Փարիզ—Բեռլին—Մոսկվա աշխարհաքաղաքական ձեւավորվող առանցքը:*

Ներկայումս Արեւելյան Եվրոպայի ամենախոշոր պետությունը Լեհաստանն է, որն, ի լրումն այլ հանգամանքների, ունի ավանդական հակառուսական, հակագերմանական եւ ամերիկամետ-բրիտանամետ կողմնորոշում: Իրաքի մի մասի վերահսկումը վստահելով լեհերին՝ ամերիկացիները բարձրացնում են Լեհաստանի հեղինակությունն աշխարհում եւ սկսում այդ երկրի՝ որպես Եվրոպայում իրենց հիմնական ռազմավարական դաշնակցի, ձեւավորումը:

Մասնավորապես ԱՄՆ-ը մտադիր է իր ռազմաօդային ուժերը տեղակայել լեհական Պոզնան քաղաքի մոտ գտնվող օդանավակայանում: Նախատեսվում է օգտագործել նաեւ Ռումինիայի եւ Բուլղարիայի օդանավակայանները եւ նավահանգիստները:

Նշենք նաեւ, որ համաձայն մամուլում հայտնված տեղեկատվության, Իրաքում գտնվող ամերիկյան զինուժը չի պատրաստվում լքել տարածաշրջանը եւ մտադիր է ամրապնդվել ոչ միայն Իրաքում, այլ նաեւ հարեւան երկրներում, առաջին հերթին՝ Սաուդյան Արաբիայում:

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Դավիթ Հովհաննիսյան

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում իրաքյան հիմնահարցի քննարկումները եւ դրանց ընթացքում Արեւմտյան Եվրոպայի մի շարք երկրների ու Միացյալ Նահանգների միջեւ սկզբունքային ռազմավարական հակասությունների ի հայտ գալը խթանեցին չափազանց կարեւոր նշանակություն ունեցող մի գործընթաց՝ անկախ Եվրոպական բանակի (այսպես կոչված՝ Եվրակորպուս) ստեղծումը: Պատերազմի ընթացքը եւ ապա հետպատերազմական Իրաքի հետ կապված հարցերում՝ Եվրամիության երկրների մասնակցության խնդիրը էլ ավելի սրեցին այս կազմակերպության առաջատար պետությունների հարաբերությունները ԱՄՆ-ի հետ եւ ստիպեցին նրանց արագացնել բոլոր այն գործընթացները, որոնք կոչված են նպաստելու ժամանակակից աշխարհում Եվրոպակենտրոն աշխարհաքաղաքական իրավիճակի ձեւավորմանը:

Եվրակորպուսի ստեղծման գաղափարն առաջին անգամ հնչել է 1991թ., երբ նոր թափ ստացան քննարկումներն այն մասին, որ Եվրամիության կազմի մեջ մտնող երկրները պետք է կառուցվածքային փոփոխությունների դիմեն՝ միասնական տնտեսական, ֆինանսական, քաղաքական եւ ռազմական դաշտի ձեւավորման նպատակով: Նույն թվի դեկտեմբերին Մասսերիխտում Եվրամիության 12 երկրները «Եվրոպական պաշտպանական միասնականության» ստեղծման վերաբերյալ պայմանագիր ստորագրեցին:

Նախաձեռնությունը նախապես ձեւավորվել էր Փարիզի եւ Բոննի միջեւ կայացած երկկողմանի բանակցություններում, որոնք, ի վերջո, հանգեցին այս հարցերի վերաբերյալ ֆրանս-գերմանական պայմանավորվածությունների:

1992թ. մայիսին Լա Ռոշելում տեղի ունեցած բանակցությունների արդյունքում Ֆրանսիայի եւ Գերմանիայի ղեկավարները հայտարարեցին երկազգ ֆրանս-գերմանական բանակային կորպուսի ստեղծման մասին: Նախագահ Միտերանը եւ կանցլեր Քոլը Եվրոպական միասնության հիմնական նախաձեռնողները եւ ճարտարապետներն էին: Նրանց մտահղացման համաձայն, այս նոր կորպուսը պետք է հանդիսանար Եվրոպական ռազմական ուժերի սաղմը:

Հարկ է նշել, որ Եվրամիության անդամները միանշանակ գնահատական չտվեցին այս նախաձեռնությանը: Եթե Բելգիան պատրաստ էր արդեն այն ժամանակ առանց նախապայմանների միանալ Գերմանիային եւ Ֆրանսիային, ապա Իսպանիան եւ Լյուքսեմբուրգը, դրական գնահատե-

լով այն, ունեին որոշ վերապահումներ: Մեծ Բրիտանիան, Իտալիան եւ Յոլանդիան դեմ էին, իսկ մյուսները հստակ դիրքորոշում չէին ձեւավորել:

Համաձայն Բոնն – Փարիզ պայմանավորվածությունների, այս երկու երկրները ձեւավորեցին մի նախագիծ, որով նախատեսվում էր արդեն 1995թ. ավարտել 35-40 հազարանոց եվրոպական բանակի ձեւավորումը: Սակայն այդ ծրագիրը տարբեր պատճառներով, որոնցից, թերեւս, ամենակարեւորը Միացյալ Նահանգների բացասական վերաբերմունքն էր, չիրականացավ: Միայն 2000թ. նոյեմբերին կայացած Եվրամիության երկրների պաշտպանության նախարարների կոմիտեի նիստում որոշում ընդունվեց 2003թ. ավարտել 60 հազարանոց Եվրակորպուսի ձեւավորումը:

Իրաքյան պատերազմի անմիջական ազդեցությամբ կարելի է բացատրել այն, որ բոլորովին վերջերս Եվրամիության արտաքին քաղաքականության ղեկավար Խ. Սոլանան հայտարարեց եվրոպական անկախ զինված ուժերի անհապաղ ստեղծման մասին եւ տեղեկացրեց, որ մոտ ժամանակներս ստեղծվելու է Եվրամիության սպառազինությունների զնւմների հատուկ գործակալություն: Այս որոշումը նշանակում է, որ Եվրամիությունն անցնում է իր ստորաբաժանումների ձեւավորմանն ուղղված անմիջական գործողությունների:

Մեկ այլ կարեւոր գործընթաց է ծավալվել նախկին խորհրդային տարածքում. Դուշանբեում ԱՊՀ անդամ վեց երկրների (Ռուսաստան, Հայաստան, Բելառուս, Ղազախստան, Կիրգիզիա, Տաջիկստան) ստորագրությամբ՝ Հավաքական անվտանգության պայմանագիրը վերափոխվեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության, այսինքն՝ ստեղծվեց մի նոր ռազմաքաղաքական բլոկ, որը ռուսական լրատվամիջոցներն արդեն իսկ անվանել են «Վարչավայի պայմանագիր-2»: Կազմակերպության կառուցվածքը կրկնօրինակում է ՆԱՏՕ-ի համակարգը: ՆԱՏՕ-ի օրինակով էլ ստեղծվել է Հավաքական անվտանգության խորհրդի Գլխավոր քարտուղարի պաշտոն, որը զբաղեցրել է գեներալ Բորոյուժանի՝ Ռուսաստանի սահմանապահ զորքերի նախկին հրամանատարը, որն իր պաշտոնի բերումով լավ ծանոթ է ՀԱՊԿ-ի մեջ մտնող երկրների ղեկավարներին: Վեց երկրների նախագահները համաձայնել են նաեւ ՀԱՊԿ-ի միացյալ շտաբի ստեղծման մասին, որի ձեւավորման աշխատանքներն արդեն իսկ սկսել են:

Ի՞նչ իմաստ ունի այս ռազմաքաղաքական բլոկի ստեղծումը: Հարցը տրվել է մասնակից բոլոր երկրների ղեկավարներին, սակայն միայն Բելառուսի նախագահի պատասխանը որոշակի հստակություն մտցրեց այս խնդրում. *«ՄԱԿ-ում որոշակի ուժեր միտված են քանդելու միջազգային անվտանգության համակարգը... Անհրաժեշտ է ճգնաժամային իրավիճակներում մեր գործողությունների ավելի ճկուն կորոդինացում»:* Բատկոն իմաստ չի տեսնում թաքցնելու այն, ինչն առանց այդ էլ պարզ է:

Վերը նշված երկու գործընթացները, շատ տարբեր լինելով իրենց ձեւերով եւ միջոցներով, նման են իրենց տրամաբանությամբ: ՄԱԿ-ի

անվտանգության դերի անտեսումը, Իրաքում անգլո-ամերիկյան բանակի գործողությունները, ԱՄՆ միանձնյա որոշումները այս երկրի հետպատերազմական ճակատագրի վերաբերյալ՝ տագնապի զգացում են առաջացրել Եվրոպայում եւ Ռուսաստանում, որտեղ արդեն չեն հավատում հանգստացնող խոսքերին (Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերն, օրինակ, հայտարարել է, որ նոր համաշխարհային կարգը նախատեսում է երկու բեւեռ՝ Միացյալ Նահանգներ եւ Եվրամիություն: Եվրոպական մայրաքաղաքներում այս հայտարարությունը համարել են ուղղակի սուտ եւ ապատեղեկատվություն): Անվտանգությունից բխում է ինքնապահովման ցանկությունը, որն արտահայտվում է նոր անվտանգության համակարգերի ստեղծմանն ուղղված գործընթացներով: Սակայն այս լուրջ եւ իրար դեմ ուղղված անվտանգության համակարգերի ստեղծման հետեւանքները կարող են ունենալ շատ ավելի լուրջ եւ գուցե նաեւ՝ ավելի վտանգավոր հետեւանքներ, քան այսօր ենթադրվում է:

* * *

Աշխարհաքաղաքականություն գիտության հիմնադիրները (Յ. Մաք Քինդեր, Կ. Հաուսհոֆեր, Ն. Սփիքմեն, Ա. Մեհեն եւ մյուսներ), շատ հարցերում բանավիճելով, մի խնդրի շուրջ միակարծիք են եղել՝ եվրասիական մայրցամաքը պատմության ամբողջ ընթացքում եղել եւ շարունակում է մնալ համաշխարհային իշխանության ձգտող ուժերի մրցակցության կամ հակամարտության հիմնական բենահարթակը:

Հայտնի է Յ. Մաք Քինդերի աֆորիզմը, համաձայն որի՝

«Ով տիրում է Արեւելյան Եվրոպայում, նրան պատկանում է երկրի սիրտը (կամ՝ «միջնամասը» /heartland/ - Դ.Հ.),

Ով իշխում է երկրի սրտում, իշխում է Համաշխարհային կղզում (Եվրասիա - Դ.Հ.),

Ով իշխում է Համաշխարհային կղզում, նա տիրում է աշխարհում»:

1997թ. հրատարակված «Մեծ շախմատային խաղատախտակ» աշխատության մեջ ԱՄՆ նախկին նախագահ Ջիմի Քարթերի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջրիզմել Բժեզինսկին գրում էր. *«Եթե միջնամասը (Եվրասիա - Դ.Հ.) հնարավոր է ներգրավել Արեւմուտքի ընդլայնվող ուղեծրի մեջ, որտեղ գերակա է Ամերիկան, եթե հարավային տարածաշրջանում որեւէ մեկ խաղացողի տիրակալությունը չի գերիշխում եւ եթե Արեւելքը չմիավորվի այնպես, որ ստիպի Ամերիկային լքել իր անդրծովային ռազմախարհսխները, ապա այդ դեպքում, կարելի է ասել, Ամերիկան հաղթանակ կտանի: Սակայն եթե միջնամասը հետ մղի Արեւմուտքին, վերածվի ակտիվ միասնական միավորի եւ կամ հսկողության տակ վերցնի Հարավը կամ էլ որեւէ խոշոր արեւելյան տերության հետ միություն ձեւավորի, ապա ամերիկյան գերիշխանությունը Եվրասիայում լրջորեն կսահմանափակվի: Նույնը տեղի կունենա, եթե որեւէ կերպ հնարավոր լինի երկու խոշոր արեւելյան խաղացողների միավորումը: Վերջապես, եթե արեւմտյան գործընկերները քշեն Ամերիկային*

արեւմտյան հեռանախի իր թուխսից, ապա դա ինքնըստինքյան կնշանակի եվրասիական շախմատային խաղատախտակի վրա ծավալվող խաղին Ամերիկայի մասնակցության ավարտը...»:

Ամերիկյան խոշորագույն քաղաքագետի այս միտքը վերջին շրջանում տեղի ունեցող իրադարձությունների լույսի ներքո առավել քան արդիական հնչողություն է ստանում: Անշուշտ, պատահական չէ այն հսկայական նշանակությունը, որ տրվում է ամերիկյան գերակայության եւ հսկողության ապահովմանը արեւմտյան եւ կենտրոնական եվրոպական երկրների վրա՝ նույնիսկ «սառը պատերազմի» ավարտից հետո:

Հարցն այն է, որ քաղաքակրթական եւ մշակութային հիմնական զարգացումների եւ գլոբալ գործընթացների ծագման եւ տարածման հիմնական ակունքը եւ թատերաբեմը հանդիսացող եվրասիական մայրցամաքում տիրող ուժը ապահովում է իր շարունակական գերակա դիրքը համաշխարհային հարթության մեջ:

Ներկայումս տեղի ունեցող գործընթացների խորքային իմաստը հենց եվրասիայի կամ նրա կարեւորագույն տարածաշրջանների վրա հսկողություն հաստատելու համար ծավալվող պայքարի մեջ է: Ֆրանս-գերմանական աշխարհաքաղաքական դաշինքի գործողությունները՝ մի կողմից, Ռուսաստանի փորձերը՝ իր շուրջը հավաքել եւ ռազմաքաղաքական դաշինքի տեսք տալ Խորհրդային Միության կործանումից հետո դեռ իր ուղեծրում մնացած նորանկախ պետություններին՝ մյուս կողմից, հետապնդում են ամերիկյան միաբեւեռ աշխարհակարգին դիմակայելու նպատակ:

Ամերիկյան քաղաքականության նպատակը Ջ. Բժեզինսկին հետելյալ կերպ է բնորոշում. «...կայսերական գեոստրատեգիայի երեք կարեւորագույն պարտականություններն են՝ վասալների միջեւ գործարքի կանխումը եւ ընդհանուր անվտանգությունից նրանց կախման ապահովումը, ենթակաների հնազանդության պահպանումը եւ նրանց պաշտպանության ապահովումը, բարբարոսների միավորման կանխումը»:

ԱՄՆ պաշտպանության նախարար Ռամսֆելդի նոր եւ հին եվրոպաների մասին արտահայտությունը պայթող ռումբի դեր խաղաց եվրամիության հիմնադիր անդամների համար: Իսկ Լեհաստանին Իրաքում օկուպացիոն գոտի հատկացնելն այն դեպքում, երբ Միացյալ Նահանգները բավականին կոպիտ մերժեցին Բեռլինի եւ Փարիզի արտահայտած ցանկությունը՝ մասնակից լինելու Իրաքի վերականգնմանը, վերջնականապես պարզ դարձրին «հին եվրոպայի» ղեկավարների համար Վաշինգտոնի քաղաքական նպատակները:

Ամենայն հավանականությամբ ՆԱՏՕ-ի եւ եվրամիության նոր անդամների քաղաքականությունը զոնե մոտակա շրջանում լինելու է ընդգծված ամերիկամետ: Միաժամանակ եվրամիության «ավանգարդը»՝ Ֆրանսիան, Գերմանիան, Բելգիան եւ Լյուքսեմբուրգը, օգտագործելով իրենց տրամադրության տակ գտնվող շատ լուրջ տնտեսական եւ քաղա-

քական լծակները, կծգտեն ազդել Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի նոր դեմոկրատիաների վրա՝ վերջիններիս քաղաքականությունը ավելի եվրոպակենտրոն դարձնելու նպատակով:

Բոլոր դեպքերում անհրաժեշտ է արձանագրել, որ Միացյալ Նահանգներ – Եվրամիություն հարաբերությունները երբեք այսքան լարված չեն եղել եւ մոտ չեն եղել կոնֆլիկտային դառնալուն, որքան ներկայումս են:

Հարկ է նշել, որ Եվրամիության եւ ԱՄՆ-ի միջեւ հակասություններ միշտ էլ եղել են, սակայն «սառը պատերազմի» պայմաններում ընդհանուր թշնամու՝ Խորհրդային Միության առկայությունը ստիպել է կողմերին անտեսել այդ հակասությունները եւ գործուն մեխանիզմներ մշակել հակասությունների հարթեցման համար:

Այդ դրական փորձը, կայուն ինստիտուցիոնալ բնույթ ունեցող հակասությունների հարթեցման մեխանիզմները, ինչպես նաեւ քաղաքակրթական կարեւորագույն նշանակություն ունեցող ընդհանրությունների եւ նոր տիպի «ընդհանուր թշնամիների» առկայությունը այն գործոններն են, որոնք թույլ կտան մեղմել իրավիճակը: Սակայն իրական հակասությունները, ինչպես փորձ արվեց ներկայացնել, շատ ավելի գլոբալ եւ սկզբունքային բնույթ ունեն:

* * *

Որքանով պետք է Հայաստանը մտահոգվի այս գործընթացների կապակցությամբ, եւ արդյո՞ք մեր հետաքրքրությունը կարող է ունենալ՝ բացի զուտ տեսական բնույթից, ինչ-որ գործնական իմաստ:

Պատասխանը, անկասկած, միանշանակ է: Հարցն այն է, որ Միացյալ Նահանգների մղումը դեպի այսպես կոչված եվրասիական «միջնամաս» (heartland) իրականացվում է նաեւ կովկասյան ուղղությամբ: Սա իր հերթին նշանակում է, որ աստիճանաբար ավելի եւ ավելի լուրջ լարվածություն ձեռք բերող ամերիկա-եվրոպական հարաբերությունները, ինչին չի հապաղի իր մասնակցությունը բերել նաեւ Ռուսաստանը (չկորցնելով հանդերձ իր առանձին համաշխարհային ուժ եւ եվրասիական տիրակալ դառնալու միտումները), իրենց արտահայտման կետերից մեկն էլ դարձնելու են կովկասյան աշխարհաքաղաքական շրջանը, որտեղ այն արդեն իսկ արտահայտվել է հակամարտությունների եւ լարվածության գոտիների ստեղծման ձեւով:

Միացյալ Նահանգների ռազմական ներկայությունը Կենտրոնական Ասիայում ու Հարավային Կովկասում եւ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության ստեղծումը երկու իրար հակազդող աշխարհաքաղաքական միտումների արտահայտությունն են հանդիսանում: Հայաստանի ընդգրկվածությունը ՀԱՊԿ-ի մեջ մեր երկիրը անխուսափելիորեն դարձնում է այս աշխարհաքաղաքական հակամարտության մասնակից:

Ունենալով Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը, Թուրքիայի հետ չմարած կոնֆլիկտը եւ ընդգրկված լինելով դրանց համապատասխանող

լարվածության գոտիների մեջ՝ Հայաստանն առանձին էլ ներկայացնում է աշխարհաքաղաքական խոցելի միավոր, որին ուղղված է եւ հետագայում ավելի արտահայտված ուղղվածություն է ձեռք բերելու վերը նշված հակասություններից բխող ուժային վեկտորը:

ՀԵՏՍԻՈՆՆԻՉՄԸ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԵՍԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գազիկ Տերտերյան

Այսօր երկրագնդի «թեժ կետերից» մեկը Մերձավոր Արեւելքն է: Արդեն երկար տարիներ այնտեղ պաղեստինցիների ու հրեաների միջև առանց կանոնների պատերազմ է գնում: Դրա հետ մեկտեղ, որոշ դիտորդների կարծիքով, հրեական ազգային շարժումը՝ սիոնիզմը, ապրում է համակարգային ճգնաժամ: Դրա պատճառ են հանդիսանում աշխարհով մեկ տարածված հրեական սիյուռքի եւ բուն Իսրայել պետության միջև առկա խորքային հակասությունները:

Վերջին ժամանակներս Համաշխարհային սիոնիստական կազմակերպությունն իր նպատակների ու խնդիրների վերաիմաստավորման լուրջ փորձեր է ձեռնարկում, որպեսզի դրանք առավել համապատասխանեցնի ինչպես Իսրայելի, այնպես էլ հրեական հոծ սիյուռքի փոփոխվող պահանջներին: Իսրայելից դուրս, հիմնականում ԱՄՆ հրեական ազդեցիկ շրջանները գտնում են, որ սիյուռքի հրեաները պետք է ապրեն ցրված վիճակում՝ չվերադառնալով պատմական հայրենիք, քանզի իրենց զգում են սեփական տանը, եւ նրանց գործունեության եւ հետաքրքրությունների կենտրոններն էլ անմիջապես գտնվում են իրենց բնակության երկրներում: Այս երեւույթը ստացավ հետսիոնիզմ անվանումը, որի հիմնական կանխադրույթը (պոստուլատ) այն պնդումն է, թե սիոնիզմի առաքելությունն արդեն ավարտված է: Նշենք, որ այս հայեցակարգն արտահայտում է միայն փոքրաթիվ վերնախավի կարծիքը, որը սակայն զգալի ազդեցություն ունի հրեա հասարակության վրա: Միաժամանակ, հենց այդ վերնախավի ներսում գոյություն ունի երկու մոտեցում:

Առաջինն ընդգծված բարեհաճությամբ է դիտարկում սիոնիզմը, բայց եզրակացնում է, որ այն արդեն հասել է իր նպատակին եւ այլևս ոչինչ չունի ասելու, քանզի հրեա ժողովրդի պետական ու քաղաքական վիճակի կարգավորումն արդեն կայացել է, եւ Իսրայել պետությունն արդեն բավականին հզոր է:

Հետսիոնիզմի գաղափարախոսության երկրորդ ձեւը, ըստ էության, մինչ Իսրայելի ստեղծումը գոյություն ունեցող հակասիոնիստական գաղափարախոսության վերամարմնավորումն է: Այն ժամանակ սիոնիստական շարժումը համակել էր հրեա ժողովրդի համեմատաբար ոչ մեծ մասը, եւ նրան ընդդիմադիր էին տարբեր ազդեցիկ կուսակցություններ ու խմբեր: Սիոնիզմի նպատակները բոլորովին էլ համահրեական նպատակներ չէին: Պետական անկախության անհրաժեշտության վերաբերյալ միակարծությունը ձեւավորվեց լոկ Իսրայելի ստեղծումից հետո. միայն

այդ ժամանակ սիոնիզմը միահամուռ կերպով ընդունվեց որպես կառուցողական ուղղություն եւ կարողացավ միավորել Իսրայելի ու սփյուռքի հրեությանը:

Սիոնիստների եւ հետսիոնիստների պայքարը մեկ տասնամյակ չէ, որ շարունակվում է, իսկ դրա պատճառ հանդիսացան Պաղեստինի շուրջ հայտնի իրադարձությունները:

Այստեղ տեղին է հիշել հակամարտության պատմությունը: Իսրայել պետությունը հռչակվեց 1948թ. մայիսի 14-ին Պաղեստինի տարածքի մի մասում՝ համաձայն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1947թ. նոյեմբերի 29-ի որոշման, որով բանաձեւ ընդունվեց անգլիական մանդատի վերացման եւ Պաղեստինի տարածքում երկու անկախ՝ հրեական ու պաղեստինյան պետությունների ստեղծման մասին: Երուսաղեմն առանձնացվեց որպես ՄԱԿ-ի կառավարման ներքո գտնվող ինքուրույն վարչական միավոր: Արաբա-իսրայելական մի քանի պատերազմների ընթացքում Իսրայելը զավթեց ՄԱԿ-ի կողմից Պաղեստինի արաբական պետության համար հատկացված պաղեստինյան տարածքը, ինչպես նաեւ Երուսաղեմը՝ այն հայտարարելով Իսրայելի «հավերժ եւ անբաժան» մայրաքաղաք:

Այս իրադարձությունների ընթացքում ավելի բարձր սկսեցին հնչել հրեական բովանդակությամբ Իսրայել պետության եւ ժողովրդավարության սկզբունքների միջեւ գոյություն ունեցող հակասությունների մասին պնդումները: Համաձայն արված դատողությունների, եթե Իսրայելը հավակնում է իսկական ժողովրդավարության, պետք է դադարի հրեական պետություն լինելուց եւ դառնա իր բոլոր քաղաքացիների, այդ թվում՝ նաեւ պաղեստինցիների պետությունը: Անկասկած, այսպիսի պատկերացումների արդյունք պետք է հանդիսանա Իսրայելի՝ սիոնիստական էությունից հրաժարումը, քանզի, եթե Իսրայելը դադարի լինել հրեական պետություն, ապա չի կարող շարունակել նոր հայրենադարձների «կլանման», հրեության ազգային եւ մշակութային ինքնության զարգացման սիոնիստական քաղաքականությունը:

Մինչդեռ ամերիկյան սիոնիստական լոբբին, որ ներկայացնում է հրեա ժողովրդի ամենահարուստ մասը, իր գաղափարներն աստիճանաբար վերափոխում է հետսիոնիզմի: Ամերիկյան նրանց համար դառնում է ավելի ցանկալի երկիր, քան աղքատ ու հասարակ հրեա-հայրենադարձների հավաքատեղի Իսրայելը: Այս գործընթացի ապացույցն է երիտասարդ հրեաների ԱՄՆ արտագաղթի, ամերիկյան մշակույթի հետ նրանց ընտելացման եւ աստիճանական ուժացման փաստը:

ԱՄՆ-ում արդեն ստեղծվել է հոգեւոր Իսրայել, կյանքի է կոչվել «Նոր Երուսաղեմի» գաղափարը, որը հրեական սփյուռքի համար դարձել է «Հին Երուսաղեմի» գաղափարից առավել կարեւոր: Պատահական չէ, որ վերջին ժամանակներս հենց Ամերիկյան է դարձել հետսիոնիզմի գաղափարներով տոգորված համաշխարհային հրեության հոգեւոր կենտրոնը:

Ստացվում է, որ հրեա ժողովրդի միավորման նախաձեռնությունն աննկատելիորեն աշխարհագրական Իսրայելից անցել է ԱՄՆ-ում հիմնված՝ փաստորեն «նոր» Իսրայելին եւ «նոր» Սիոնին: Իսկ սիոնիզմն ինքը վերափոխվել է հետսիոնիզմի: Այս գործընթացը որոշակի առումով փոխել է նաեւ Ամերիկայի պատկերը: Այսօր կարելի է հանդիպել ամենատարբեր հեղինակների բազմաթիվ աշխատությունների, որոնցում ԱՄՆ-ը բնութագրվում է որպես գերկայսրություն՝ իր բոլոր կայսերական ատրիբուտներով եւ կայսերական գաղափարախոսությամբ:

Նոր կայսրությունում համատեղվում են ծայրահեղ պրագմատիզմն ու սեփական կատարելության մեսիական գաղափարախոսությունը, որով Ամերիկան հանդիսանում է մեր «մեղավոր աշխարհի» փրկիչը, եւ այդ պատճառով ամերիկանիզմը պետք է հաստատվի երկրագնդի բոլոր անկյուններում:

Ամերիկյան պրագմատիզմի ակունքները հանրահայտ են. նրանք ծագումնաբանորեն ամբողջությամբ ժառանգված են իրենց հարազատ նախորդից՝ Բրիտանական կայսրությունից եւ բողոքականությունից: Մեսիականությունը ներմուծված հատկանիշ է եւ, ավելի շուտ, մուսաֆայի արդյունք:

Մինչդեռ տպավորություն է ստեղծվում, թե հենց այդ մեսիականության զգացումն է այսօր կանխորոշում ԱՄՆ-ի կայսերական քաղաքականությունը: Բոլոր դեպքերում՝ այդ մասին են վկայում մի շարք հրապարակումներ. այն գործիչները, որոնք ծրագրավորում են այսպիսի քաղաքականություն, իրականում մեսիականության գաղափարների հետեւորդներ են: Ահա թե ինչ է այդ կապակցությամբ գրում անգլիական «Գարդիան» պարբերականը. *«Նրանցից շատերն իրենց գործունեությունը սկսել են որպես հակաստալինականներ՝ ազատականներ կամ ծախարմատականներ: Նրանք հանդիսանում են ամերիկյան հրեաների 30-40-ականների տրոցկիստական շարժման արդյունք, որը 50-70-ականներին վերածվեց հակակոմունիստական ազատականության եւ, վերջապես, իր ձեւով դարձավ ռազմամոլական (միլիտարիստական) եւ կայսերական աջ շարժում՝ չունենալով իր նախադեպը ամերիկյան քաղաքականության ու մշակույթի պատմությունում: Նրանք իրենց հեղափոխական գաղափարախոսությունը կոչում են «վիլսոնականություն» (նախագահ Վուդրո Վիլսոնի պատվին), բայց իրականում այն սիոնիզմի ծայրահեղ աջ ուղղության «Լիկուդ»-ի հետ միահյուսված Տրոցկու պերմանենտ հեղափոխության տեսությունն է»:*

Նշվում է նաեւ, որ «այդ խմբի անդամներ Ռիչարդ Փերլը, Դուգ Ֆեյթը եւ Դեւիդ Ուերմսերը 1996թ. համատեղ դիմում են գրել Քնեսետի ընտրություններում հաղթանակած «Լիկուդ» կուսակցության կազմած Իսրայելի կառավարությանը՝ կոչ անելով լիովին հրաժարվել պաղեստինցիների հետ բանակցություններից եւ «խաղաղություն հողերի դիմաց» քաղաքականությունից»: Նրանք պնդում էին, որ «Իսրայելն իր ռազմավարական

չրջակայքը կարող է ձեւավորել Սիրիայի զսպման, թուլացման եւ նույնիսկ ետ շարտման ճանապարհով: Այդ քանքերը կարելի է կենտրոնացնել նաեւ Իրաքում Սադամ Հուսեյնին իշխանությունից հեռացնելու վրա»:

Հետագայում, այսինքն այսօր, այդպես էլ դասավորվեց:

**ԲԱՔՈՒ – ԹԲԻԼԻՍԻ – ՋԵՅՅԱՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԸ
ԱՄՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Սեւակ Սարուխանյան

«Ջորջ Բուշ-կրտսերի նախագահ ընտրվելուց հետո էներգիայի խոշորագույն սպառող ԱՄՆ արտաքին քաղաքականության ռազմավարությունում ածխաջրածնային հիմնական աղբյուրների վերահսկողության հարցը մղվեց առաջին պլան: Հասարակությանը ներկայացնելով իր էներգետիկ ծրագիրը՝ նախագահ Բուշը 2001թ. հոկտեմբերի 17-ին բառացիորեն ասաց հետևյալը. «Մեր երկիրն էներգետիկ մեծ անկախության կարիք ունի: Դա ազգային անվտանգության խնդիր է»: Ամերիկյան Սենատի անդամներին ուղղած նամակում ԿՀՎ նախկին տնօրեն Ջեյմս Վուլսին եւ ազգային անվտանգության հարցերով նախագահի նախկին խորհրդական Ռոբերտ Մակֆերլայնը գրում են. «ԱՄՆ նավթային կախվածությունը սպառնում է մեր ազգային անվտանգությանը եւ տնտեսական բարեկեցությանը»: Այսօր ԱՄՆ-ը էապես կախված է OPEC-ի երկրների դիրքորոշումից, որոնց կողմից նավթի առաքման ծավալների կրճատումը կամ դադարեցումը կարող է սաստիկ հարվածել ամերիկյան տնտեսությանը՝ հանգեցնելով ընդհուպ նրա փլուզմանը: Նավթն ԱՄՆ-ի համար սեփական տնտեսությունն աշխատացնելու կարելու հունք է, որին պետք է տիրել, որպեսզի հնարավորություն լինի այն իրացնելով՝ բազմապատկել կապիտալը: Այս տեսանկյունից՝ ԱՄՆ-ի համար «էներգետիկ անվտանգությունը» ազգային անվտանգության խնդիր է:

ԱՄՆ էներգետիկ ռազմավարությունում առանձնահատուկ տեղ են գրավում երկու առանցքային ուղղություններ՝ Մերձավոր Արեւելքը եւ մերձկասպյան երկրները (ստորեւ բերվում է կասպյան ավազանի ածխաջրածնային պաշարների աղյուսակը).

	Նավթ (մլրդ բարել)		Բնական գազ (տրլն մ ³)	
	Ապացուցված	Ենթադրյալ	Ապացուցված	Ենթադրյալ
Ադրբեջան	8	15	1	2
Ղազախստան	15	65	2	3
Թուրքմենստան	1	3	2	4
Ուզբեկստան	1	2	1	2
Ընդհանուր	25	85	6	11
Իրան	90	110	23	33

Թե ի՞նչ հունով է ընթանում ԱՄՆ ներկայիս էներգետիկ քաղաքականությունը եւ որքանով է այն ազդում տարածաշրջանի քաղաքականության վրա՝ փորձենք պատասխանել ստորեւ:

Անկախության հռչակումից հետո Ադրբեջանն ու Ղազախստանը բացեցին իրենց էներգետիկ սեկտորները արեւմտյան, առաջին հերթին՝ ամերիկյան ներդրողների համար: Ընդ որում, Ադրբեջանում այս գործընթացն ավելի եռանդուն էր, քան Ղազախստանում: Դա, առաջին հերթին, պայմանավորված է Ադրբեջանի աշխարհագրական հնարավորություններով, ինչը թույլ է տալիս նրան սեփական նավթն Արեւմուտք փոխադրելու մոր ուղիներ փնտրել: Արեւմտյան նավթային ընկերությունների հետ Ադրբեջանի համագործակցության գագաթնակետ հանդիսացավ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարի շինարարության նախագիծը, որն այլընտրանք էր լինելու Բաքու-Նովոռոսիյսկ խողովակաշարին՝ դրանով նվազեցնելով Ադրբեջանի եւ կասպյան նավթի արեւմտյան գնորդների կախվածությունը Ռուսաստանից: 2,3-3,3 մլրդ դոլար արժողության նավթամուղի շինարարության խորհրդանշական սկիզբը դրվեց 2002թ. սեպտեմբերի վերջին: ԱՄՆ էներգետիկայի նախարար Սփենսեր Աբրահամը, որ հանդիսությունում ներկայացնում էր ԱՄՆ կառավարությունը, հայտարարեց. «ԱՄՆ վարչակազմը եւ Ամերիկայի ժողովուրդը բարձր են գնահատում Ադրբեջանի հետ բարեկամությունն ու համագործակցությունը»:

Համաձայն ամերիկյան քաղաքագետների, տնտեսագետների ու ներդրողների պնդումների՝ 1760 կմ երկարությամբ այդ խողովակաշարն առաջին հերթին նախատեսված է ադրբեջանական նավթի փոխադրման համար: Այդպե՞ս է արդյոք:

Ադրբեջանի պետական նավթային ընկերությունը (ԱՊՆԸ) ներկայումս տարեկան արդյունահանում է 9 մլն տոննայից քիչ ավելի նավթ, որի 70%-ը տրվում է Բաքվի երկու նավթավերամշակման գործարաններին, ինչը նույնիսկ չի ծածկում դրանց արտադրական հնարավորությունները: Արտահանման համար մնում է մոտ 2.5 մլն տոննա: Այս տվյալները մոտավոր են, քանի որ ո՛չ երկրի կառավարությունը, ո՛չ արտասահմանյան նավթային ընկերությունները եւ ո՛չ էլ միջազգային առևտրային կազմակերպությունները չունեն Ադրբեջանում տարեկան արդյունահանվող նավթի ճշգրիտ տվյալները: Մինչդեռ, Ռուսաստանի հետ պայմանագրի համաձայն, Բաքու-Նովոռոսիյսկ նավթամուղով Ադրբեջանից տարեկան պիտի փոխադրվի 5 մլն տոննա, ինչը, հասկանալի է, տեղի չի ունենում: Ասվածից ակնհայտ է, որ միայն ադրբեջանական նավթը չի ծածկի Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարի հնարավորությունները:

Հիմնվելով ադրբեջանցի գիտնականների ու մասնագետների կատարած երկրաբանական հետազոտությունների արդյունքների վրա՝ ինչպես Բաքվի, այնպես էլ Արեւմուտքի շատ վերլուծաբաններ եկել են այն եզրակացության, որ Ադրբեջանի տարածքում եւ ափամերձ ջրերում նավթի պաշարները Մերձավոր Արեւելքի պաշարներին համարժեք համարելն

առասպել է: Հարկ է հիշել նաև խորհրդային մասնագետների երկրաբանական հետազոտությունների արդյունքները, որոնք հաշվի առնելով՝ ԽՍՀՄ-ը, ադրբեջանական նավթահանքերը տասնամյակներ շարունակ ինտենսիվորեն շահագործելուց հետո, չգիտես ինչու լքեց Ապշերոնի թերակղզին եւ սկսեց յուրացնել ցուրտ Յյուսիսի նավթային հանքավայրերը: Ադրբեջանական նավթային պաշարների սահմանափակության մասին են խոսում նաև ԱՄՆ շատ գիտահետազոտական ինստիտուտներ ու կենտրոններ, որոնք առավել մեծ նշանակություն են տալիս Ղազախստանի կասպյան հատվածի նավթային պաշարներին: Քաշագանի հանքավայրի հետախուզական հորատանցքի առաջին արդյունքները խոսում են այն մասին, որ այստեղ առկա են նավթի հսկայական պաշարներ: Տարբեր հաշվարկումներով՝ 2010թ. թեմզիզ եւ Քաշագան հանքավայրերի լրիվ գործարկումից հետո Ղազախստանն օրական կարդյունահանի շուրջ 3 մլն բարել նավթ:

Այսպիսով, Ամերիկային ինչո՞ւ է պետք Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը: Ի՞նչն է այս նախագծում շատ՝ տնտեսությունը, թե՞ քաղաքականությունը:

Խնդիրը այն է, որ Ադրբեջանի նավթային սահմանափակ պաշարները չեն կարող լցնել 1760 կմ երկարությամբ եւ օրական 580 000 բարել հոսքային կարողությամբ խողովակաշարը: Որպեսզի Բաքու-Թբիլիսի-Ջեյհան երթուղին լինի շահավետ, նրանով պետք է հոսի նաև ղազախական նավթը: Ղազախստանի եւ «Ղազախօյլ» ընկերության ղեկավարները բազմիցս արտահայտվել են նավթի փոխադրման այլընտրանքային ուղու անհրաժեշտության մասին: Կասպյան խողովակաշարային կոնսորցիումի կողմից մինչեւ ռուսական Նովոռոսիյսկ նավահանգիստ կառուցված նավթամուղը, որ գործարկվեց 2001թ., օրակարգից չի հանել դեպի Արեւմուտք ղազախական նավթի փոխադրման հարցը: 2002թ. վերջին Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նախագծին Ղազախստանին միանալու բանակցությունները, որ ընթանում էին Լոնդոնի ամերիկյան դեսպանատանը, հաջողությամբ ավարտվեցին, ինչը ղազախական Աքտաու քաղաքից մինչեւ Բաքու ձգվող խողովակաշարի արագ շինարարության հույս է տալիս: Չնայած այն «խիզախ» հայտարարություններին, թե «Բաքու-Ջեյհանը ղազախական նավթի կարիքը չունի», միանգամայն ակներեւ է, որ առանց Ղազախստանի նավթի՝ խողովակաշարը շահութաբեր չի լինի:

Սակայն միամտություն կլինի այդ խողովակաշարի շինարարության մեջ տեսնել միայն տնտեսական անհրաժեշտություն: Այդ նախագծում քաղաքականությունն ամենեւին էլ քիչ չէ: Խողովակաշարի կառուցման նախագիծը, որ կոչված էր միացնելու Բաքուն եւ Թուրքիան, քննարկվում էր 1992-ից, բայց նրա հաստատման եւ իրականացման ամենաակտիվ փուլը սկսվեց 2001-2002թթ.: Վ. Պուտինի նախագահ ընտրվելուց հետո Ռուսաստանը ցուցաբերեց Յյուսիսային Կովկասում սեփական խնդիրները լուծելու իր հնարավորությունները եւ երկրի պետական կառուցվածքն ու

տնտեսությունը վերականգնելու կամք: Ռուսաստանը սկսեց վերստին կառուցել իր հարաբերությունները ԽՍՀՄ նախկին հանրապետությունների հետ՝ այդ հարաբերությունները հիմնելով փոխշահավետության եւ պրագմատիզմի սկզբունքների վրա: Հաշվի առնելով նախկին խորհրդային հանրապետությունների տնտեսությունների փոխադարձ կախվածությունը՝ Ռուսաստանի այս քաղաքականությունը հաջողության մեծ հնարավորություն ունի, այդ թվում Վրաստանի եւ Ադրբեջանի նկատմամբ, երկրներ, որոնք ԱՄՆ կողմից դիտվում են որպես միջինասիական պետություններ տանող դարպասներ:

Անդրկովկասում հաստատվելը ԱՄՆ-ի համար առաջնային նշանակություն ունի: Վրաստանում հաստատվել հնարավոր է՝ օգտագործելով տնտեսական կախվածության մարտավարությունը, իսկ Ադրբեջանում հնարավոր է ոչ միայն տնտեսական լծակների օգնությամբ, որոնք Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարի գործարկումից հետո առավել քան բավարար կլինեն, այլև էթնիկապես Ադրբեջանին մոտիկ Թուրքիայի միջոցով:

Խողովակաշարի շինարարության նախագիծը կոչված է «ապաշրջափակելու» Ադրբեջանը՝ չնայած նրա անկլավային դիրքին: Վրաստանի տարածքով անցնող Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարը, տարբեր հաշվարկներով, վրացական պետությանը կարող է տալ 600-800 մլն դոլարի եկամուտ: Դա Վրաստանին կդնի լրիվ կախվածության մեջ նավթային դոլարներից ու Թուրքիայից, որը հանդես է գալիս նավթամուղի անվտանգ գործելու յուրօրինակ երաշխավորի դերում, անշուշտ ԱՄՆ որոշմամբ:

Ուզբեկ քաղաքագետ Ֆահրադ Թոլիպովն իր մի հոդվածում գրում է. *«Աֆղանստանը դարձավ ահաբեկիչների ապաստարան եւ միջազգային անվտանգության գլոբալ սպառնալիքի աղբյուր առաջին հերթին այն պատճառով, որ կորցրել էր պետականության ու սոցիալ-տնտեսական համակարգի բոլոր ատրիբուտները, դարձել Հարավային Ասիայում աշխարհաքաղաքական մրցակցության գոհ»:* Այս խոսքերը գործածելի են նաեւ Վրաստանի համար, որը, ցավոք, նույնպես կորցրել է պետականության շատ ատրիբուտներ, ինչպես նաեւ գլխավոր ատրիբուտը՝ երկրի ղեկավարության կողմից պետության տարածքի հսկողությունը:

Հաշվի առնելով այս բոլոր հանգամանքներն ու երկրի հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում տիրող մեծածավալ կոռուպցիան՝ արտասահմանյան ներդրողները չեն շտապում Վրաստանի տնտեսությունում գումարներ ներդնել: Հասկանալի է, որ անկայունության եւ տարածքային չլուծված խնդիրների առկայության պայմաններում Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի արդյունավետ աշխատանքի վրա հնարավոր չի լինի հույս դնել: Վրաստանը պարզապես չի կարող ապահովել նավթի երթուղու անվտանգությունը: Այս բոլորը, որքան էլ տարօրինակ է, չի անհանգստացնում Միացյալ Նահանգներին: Դեռ ավելին, կա-

րելի է ենթադրել, թե այդպիսի իրավիճակը ձեռնտու է ԱՄՆ-ին, որովհետև կարող է առիթ հանդիսանալ՝ նավթամուղի անվտանգությունը եւ, ինչո՞ւ էլ, նաեւ երկրի ներքաղաքական կայունությունն ապահովելու պատրվակով (իհարկե, պաշտոնական թբիլիսիի ձեւական համաձայնությունից հետո) Կրաստան ամերիկյան կամ թուրքական սահմանափակ ուժեր մտցնելու համար: Իրաքյան պատերազմի ժամանակ Մառնեուլի եւ Վազիանիի ռազմակայանները ԱՄՆ օգտագործմանը տրամադրելու Կրաստանի պատրաստակամությունը, ինչպես նաեւ ԱՊՀ Հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) միասնական համակարգի մեջ չմտնող վրացական եւ ադրբեջանական ՀՕՊ համակարգերի միավորման գաղափարն ահազանգ են այն բանի, որ շուտով ԱՄՆ ու նրա դաշնակիցների խոշոր ռազմական բազաներ կարող են հայտնվել Կրաստանի տարածքում: Կրաստանում ամերիկացի զինծառայողների ներկայիս համեստ թվաքանակն ամենեւին էլ չի հանդիսանում Միացյալ Նահանգների հետ այդ հանրապետության ռազմական համագործակցության վերին սահմանը:

Բաքու – Թբիլիսի – Ջեյհան նախագիծը ստեղծվել է որպես այլընտրանք ոչ միայն ռուսական, այլեւ իրանական շահերի: Ըստ էության, Բաքու – Թբիլիսի – Ջեյհան նախագիծը միջազգային ասպարեզում Իրանին մեկուսացնելու ԱՄՆ ռազմավարության մաս է: Heritage հիմնադրամի առաջատար վերլուծաբան Արիել Քոենը գրում է. *«Ահաբեկչության դեմ պայքարի ընթացքում ԱՄՆ-ի համար առաջնային նշանակություն ձեռք բերեցին այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են կասսայան ավազանի էներգետիկ անվտանգության ապահովումը եւ դաշնակից պետություններին աջակցումը, որոնք տարածաշրջանում իրենց վրա զգում են «տեղական ուրուրների», օրինակ՝ Իրանի ծնշումը»:* Հիշատակելով Իրանը ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում՝ դոկտոր Քոենը ակնարկում է այդ երկրում «հակաահաբեկչական» գործողություն անցկացնելու մասին: Միաժամանակ ահաբեկչության դեմ պայքարը կապելով էներգետիկ անվտանգության հետ՝ ամերիկացի վերլուծաբանը տալիս է ԱՄՆ ներկայիս քաղաքականության բնութագիրը, որը հակաահաբեկչական կարգախոսներն օգտագործում է սեփական ազգային շահերի իրականացման համար: Այլ կերպ ձեւակերպելով՝ կարելի է կրկնել մի ամերիկացի լրագրողի հոդվածի վերնագիրը. *«Նավթը եւ պայքարը ահաբեկչության դեմ՝ օժանդակում են Միացյալ Նահանգների ազդեցության ոլորտների ընդլայնմանը»:*

Ամերիկյան քաղաքագետների կարծիքով, անմիջականորեն Արեւմուտքի էներգետիկ շուկա դուրս գալու հնարավորությունը միջինասիական եւ մերձկասպյան երկրների կառավարություններին այնքան կիրապուրի, որ «նավթային դոլարնե՞ր, թե՞ Ռուսաստան» ընտրության կարիք չի լինի:

ԱՄՆ ծրագրերի իրականացումը կտրուկ կնվազեցնի Ռուսաստանի եւ Իրանի դերը տարածաշրջանում եւ ածխաջրածնային պաշարներով հա-

րուստ կասսայան ավագանը կդարձնի ամերիկյան լայնածավալ ազդեցության գոտի:

ԻՐԱՆԸ ԻՐԱՔՅԱՆ ԽՆԴՐՈՒՄ

Սարգիս Հարությունյան

«Իրաքյան խնդիրն, ընդգրկելով ժամանակակից միջազգային հարաբերությունների գրեթե ողջ դաշտը, իր ազդեցությունն ունեցավ նաև տարածաշրջանի երկրների վրա, այդ թվում եւ Իրանի: Վերջինս, լինելով տարածաշրջանի հզոր երկրներից մեկը եւ ձգտելով դառնալ տարածաշրջանային տերություն, չէր կարող դուրս մնալ իրաքյան խնդրի ազդեցության ոլորտից: Պաշտոնական թեհրանը չէր կարող չառնչվել իրաքյան ճգնաժամի հետ կապված գործընթացներին եւ առավել եւս, չէր կարող չարտահայտել իր դիրքորոշումը այդ խնդրի կապակցությամբ:

Մյուս կողմից՝ իրավիճակը կարելուովում է նրանով, որ խնդիրն առնչվում է աշխարհի ռազմավարական կարելուրագույն կետերից մեկին, որի մաս եւն կազմում Մերձավոր եւ Միջին Արեւելքը, Կովկասը, Կասպից ծովի գոտին, Կենտրոնական Ասիան եւ որտեղ բախվում եւն աշխարհի «ուժի կենտրոնների» շահերը:

Այս տարածաշրջանում Իրանի զբաղեցրած ռազմաստրատեգիական կարելուր դիրքը անմիջականորեն թողնում է իր ազդեցությունը մերձավորարեւելյան աշխարհաքաղաքական շարժերում: Իրանի հետ անմիջապես առնչվում եւն տարածաշրջանի կովկասյան, կենտրոնասիական, կասպյան շրջանները, Իրանի ափերը ողողում եւն Պարսից, Օմանյան ծոցերը եւ Հնդկական օվկիանոսը: Էթնիկական, կրոնական, ռազմական կամ տնտեսական այնպիսի խնդիրներ, որոնք առաջին հայացքից վերաբերում եւն տարածաշրջանի առանձին երկրների ներքին գործերին, փաստորեն, չեւն կարող ստանալ իրենց վերջնական կարգավորումն՝ առանց թեհրանի կարծիքը հաշվի առնելու: Ավելի քան 65 միլիոնանոց Իրանը, որն ունի աշխարհի ամենամեծ բանակներից մեկը (մոտ 800 հազար մարդ) եւ տիրապետում է աշխարհի էներգակիրների պաշարների բավականին պատկանելի մի չափաբաժնի, տարածաշրջանային գործընթացներում ունի իր ազդեցության օբյեկտիվ մակարդակը: Ուստի եւ էական է դիտարկել իրանական գործոնը իրաքյան ճգնաժամում:

Ինչպես հայտնի է, իրանա-իրաքյան հարաբերությունները երբեք էլ աչքի չեւն ընկել առանձնակի ջերմությամբ: Սկսած այն պահից, երբ XX դարի 20-ական թթ. աշխարհի քաղաքական քարտեզին հայտնվեց Իրաք պետությունը, պաշտոնական թեհրանը միշտ էլ ունեցել է որոշակի խնդիրներ՝ կապված իր արեւմտյան հարեւանի հետ: Սխալված չեւնք լինի, եթե նշենք, որ հարաբերությունները երկու պետությունների միջեւ անգամ բնութագրվել եւն «սառը» կամ «տաք պատերազմներ» տերմիններով (վերջին օրինակը 1980-1988թթ. իրանա-իրաքյան պատերազմն էր): Սա-

կայն իրաքյան ներկայիս ճգնաժամում պաշտոնական թեհրանի դիրքորոշումը պայմանավորվեց միանգամայն այլ հանգամանքներով:

Պաշտոնական թեհրանի բռնած դիրքի համար առաջնային նշանակություն ունեցան երկու շատ կարեւոր գործոններ՝ աշխարհայացքային-գաղափարախոսական եւ աշխարհաքաղաքական:

Բանն այն է, որ երկբեւեռ աշխարհակարգի փլուզումը եւ «Արեւելք» միավորի գաղափարախոսական համակարգի քայքայումը Մերձավոր Արեւելքում (որտեղ, ինչպես հայտնի է, գերիշխում են մահմեդական երկրները) խթանեցին իսլամական նոր զարթոնքը: Այդ զարգացումը բավականին հստակ կերպով նկատվում է հենց Իրաքում, ուր սոցիալիստական ուղղվածություն ունեցող ԲԱԱՍ կուսակցության վերնախավը (եւ առաջին հերթին՝ Սադամ Հուսեյնը) ստիպված էր որոշակի զիջումներ անել մահմեդական հոգեւորականությանը: Իրանի համար կոնկրետ Իրաքի պարագան բավականին նպաստավոր էր, քանզի մեծ մասամբ (մոտ 60%) շիա բնակչություն ունեցող Իրաքը ընդգրկվում էր արժեհամակարգային մեկ այլ դաշտ, որտեղ, տվյալ դեպքում, մեծ ազդեցություն ունի Իրանի Իսլամական Հանրապետությունը, ինչն էլ իր հերթին հանգեցնելու էր թեհրանի ազդեցության աճին Մերձավոր Արեւելքում:

Լիովին այլ իրավիճակ է ստեղծում հետսադամյան Իրաքը: Ամերիկյան նախագծով կառուցված Իրաքը, ամենայն հավանականությամբ, դուրս կգա վերոհիշյալ արժեհամակարգային դաշտից եւ կառաջարկի մի նոր արժեհամակարգային դաշտ մահմեդական ողջ Մերձավոր Արեւելքի համար: Սա արդեն մարտահրավեր է նաեւ Իրանին, քանզի այն ոչ միայն կորցնում է իր ազդեցության որոշակի չափաբաժինը Մերձավոր Արեւելքում, այլեւ՝ իր արժեհամակարգի համար ձեռք է բերում մրցակից արժեհամակարգ:

Իրանի համար ոչ պակաս կարեւորություն է ներկայացնում հարցի աշխարհաքաղաքական կողմը: Իրանի ներկայիս ճգնաժամի արդյունքները բավականին բարդացնում են թեհրանի աշխարհաքաղաքական դիրքերը տարածաշրջանում: Միացյալ Նահանգների ներկայության ամրապնդումը Մերձավոր Արեւելքում լրացուցիչ սպառնալիքներ է ստեղծում իրանական հանրապետության համար, քանզի Վաշինգտոնում շարունակում են թեհրանը դիտարկել որպես «չարիքի առանցքի» մաս, իսկ միջազգայնագետները շարունակում են Իրանը համարել որպես ԱՄՆ մերձավորարեւելյան քաղաքականության հերթական նշանակետ: Այժմ, փաստորեն, թեհրանը շրջափակվում է ամերիկամետ վարչակարգերի շղթայով՝ հետսադամյան Իրաք, Թուրքիա, միջինասիական հանրապետություններ, Աֆղանստան, Պակիստան եւ Պարսից ծոցի արաբական միապետություններ: Եթե հաշվի առնենք Բուշ-կրտսերի վարչակազմում տարածված այն տեսակետը, ըստ որի պետք է նպատակաուղղված «էվոլյուցիայի» ենթարկել իրանական այաթոլլաների վարչակարգը, ապա Իրանի ներկայիս վերնախավի համար մտածելու շատ բաներ կան:

Ընդհանրապես, կապված իրաքյան ճգնաժամի հետ՝ իրանական մտավոր կենտրոններում եւ քաղաքական վերնախավում երկար ժամանակ քննարկվում էր պաշտոնական Թեհրանի դիրքորոշումն իրաքյան խնդրի կապակցությամբ: Այդ առումով բավականին ուշագրավ էր քաղաքագիտության դոկտոր Ֆիրուզաբադիի տեսակետը, ըստ որի իրաքյան ճգնաժամում Իրանը պետք է վարի «դրական չեզոքության քաղաքականություն»: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ պաշտոնական Թեհրանի քաղաքական գիծը, փաստորեն, խոշոր հաշվով չէր տարբերվում «դրական չեզոքության» ուղենշից:

Հենց սկզբից պաշտոնական Թեհրանը բավականին սուր արձագանքեց ամերիկա-բրիտանական զորքերի ներխուժմանը Իրաք. պատճառը շատ պարզ էր՝ դա նշանակում էր իրանական ազդեցության կտրուկ անկում մերձավորարեւելյան գործընթացներում: Իրանի հոգեւոր առաջնորդ ալաթուլլա Ալի Խամենեին մարտի 21-ին Իրանում տոնվող նոր տարվա կապակցությամբ Իրաքի վրա հարձակումը բնութագրեց որպես «սատանայական», «նոր հիտլերիզմ» եւ կոչ արեց ողջ իսլամական աշխարհին գիտակցել վտանգի խորությունը: Դրան զուգահեռ, սակայն, ալաթուլլան նշեց. *«Իրանի Իսլամական Հանրապետությունը, որը կոչ է անում պատերազմի անհապաղ դադարեցման, չի պաշտպանում բռնապետական բասասական վարչախմբին: Մենք հանդես ենք գալիս իրաքյան ժողովրդի պաշտպանության օգտին եւ հավատում ենք, որ Իրաքի ապագան պետք է որոշվի Իրաքի ժողովրդի կողմից»:* Դատապարտող կոչով հանդես եկավ նաեւ Իրանի նախագահ Մոհամմադ Խաթամին. *«Սպառնալիքը զենք ունեցող մեծ տերության դաժան պատրանքն է՝ ունենալ իրավունք ցանկացած գնով սեփական պահանջները պարտադրել ուրիշներին»:* Իրանի Իսլամական Հանրապետության Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղարը, Իրանի պաշտպանության եւ ներքին գործերի նախարարություններն ու Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը հանդես եկան հատուկ հայտարարությամբ, որտեղ, դատապարտելով Իրաքի նկատմամբ հարձակումը, նշում էին, թե Իրանի զինված ուժերը պատրաստ են ցանկացած տեսակի ագրեսիայի եւ ուշադիր հետեւում են ընթացող զարգացումներին:

Պաշտոնական Թեհրանի մտավախությունները եւ բավականին կոշտ հայտարարությունների պատճառները պարզ էին, քանզի Մերձավոր Արեւելքում ընթացող զարգացումները խախտում էին առկա status quo-ն՝ ոչ հօգուտ իրանական արտաքին քաղաքականության: Իրավիճակն էլ ավելի բարդացրին ռազմական գործողությունները, որոնք լարվածությունը հասցրին, թերեւս, գագաթնակետին: Այսպես՝ մարտի 21-26-ը Իրանի տարածք «ընկան» երեք ամերիկյան եւ նույնքան էլ բրիտանական հրթիռներ: Իրանը զերծ չմնաց նաեւ իրաքյան հրթիռներից, չնայած վերջիններիս հետ կապված դեպքերն այդքան էլ չէին լուսաբանվում, իսկ մարտի 22-ին ամերիկա-բրիտանական զորքերը ընկան Իրանի զինված

ուժերի կրակի տակ: Դա տեղի էր ունեցել այն բանից հետո, երբ բրիտանական հատուկ նշանակության ջոկատի շուրջ 40 մարտիկներ Իրանի սահմանից մի քանի հարյուր մետրի վրա, Ֆառ թերակղզում փորձել էին ոչնչացնել իրաքյան մի զորաջոկատ: Բարեբախտաբար ամերիկա-բրիտանական ուժերից, որոնք հրաման էին ստացել չարձագանքել իրանցիների հարվածներին, զոհեր չէղան, եւ միջադեպը հարթվեց:

Ընդհանրապես պետք է նշել, որ Մերձավոր Արեւելքում ամերիկյան քաղաքականության մասին իրանական վերնախավի պատկերացումները մեծ մասամբ համասեռ են: Միջազգային խնդիրների իրանցի հայտնի փորձագետ Մահմուդ Դեհքանը այսպես բնութագրեց այդ պատկերացումները.

ա) Իրաքի գրավում, վարչակազմի փոփոխություն եւ իրաքյան 220 մլրդ բարել նավթի վրա վերահսկողության սահմանում (կարճաժամկետ նպատակ),

բ) Մերձավոր Արեւելքում իրականացնել աշխարհաքաղաքական փոփոխություններ (միջին ժամկետի նպատակ),

գ) Վերահսկողություն սահմանելով աշխարհի էներգատարողունակ շրջանների նկատմամբ՝ տնտեսական առավելություններ ստանալ Եվրամիության, Չինաստանի եւ ճապոնիայի նկատմամբ (երկարաժամկետ նպատակ):

Ի վերջո, Realpolitik-ը արեց իր գործը, եւ պաշտոնական Թեհրանը ստիպված էր մեղմացնել իր դիրքորոշումը: Ամերիկա-բրիտանական զորքերի հաջողություններն Իրաքում ուղղակի ստիպեցին իրանական քաղաքականությանը ենթարկվել որոշակի փոփոխությունների:

Ապրիլի սկզբին Իրանի արտգործնախարար Քամալ Խարազին հայտարարեց. «Անհամաձայնությունը պատերազմի հետ չի նշանակում աջակցություն Սադամ Հուսեյնին, քանզի Իրանը՝ ավելի քան մյուս երկրները, վնասվել է Իրաքի այդ իշխանությունից»: Իսկ պատերազմի ավարտից շատ չանցած Քաթարում Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ջեք Սթրոն շնորհակալություն հայտնեց Թեհրանին՝ Իրաքի դեմ ռազմական գործողությունների ժամանակ փոխգործակցության համար:

Իրաքյան ճգնաժամի հետեւանքները էական ազդեցություն կունենան Իրանի համար: Շատ հավանական է, որ մոտ ժամանակներս Իրանը ստիպված լինի դիմակայել երկու տիպի մարտահրավերների: Առաջին. ամերիկյան ազդեցությամբ ձեւավորված մերձավորարեւելյան աշխարհաքաղաքական նոր կոնֆիգուրացիայի պայմաններում՝ արեւմտյան արժեհամակարգային միավորների ներթափանցում իրանական համակարգ: Երկրորդ. բախումներ արդեն իսկ բուն իրանական համակարգի ներսում՝ կապված գաղափարախոսական տարածայնությունների հետ:

Այս ամենը բնականաբար լուրջ խնդիրներ են ներկայիս Թեհրանի համար, եւ ցանկացած փոփոխություն իր արտացոլումը կգտնի իրանական քաղաքական-տնտեսական կյանքում, ինչն էլ իր հերթին կհանգեցնի

Թեհրանի ներքին եւ արտաքին քաղաքականությունների որոշակի փոփոխության: Ամենայն հավանականությամբ, Իրանի ներկայիս վարչակազմը կփորձի հարմարվել մերձավորարեւելյան նոր իրողություններին՝ հնարավորինս պահպանելով սեփական համակարգի բնութագրիչ տարրերը: Թե որքանով դա նրան կհաջողվի՝ ցույց կտա ժամանակը:

ԿԴԱՌՆԱ՞ ԹՈՒՐՔԻԱՆ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

(Այն, ինչ տեղի ունեցավ Թեհրանում, կարող է պատահել եւ Անկարայում)

Սերժ Թրիֆկովիչ

Սերժ Թրիֆկովիչը իր դոկտորական թեզը պաշտպանել է Անգլիայում, Սաուքենմփթոնի համալսարանում: Այնուհետեւ շարունակել է գիտական գործունեությունը

Աթենքորդի **Հուլիերի**
հաստատությունում*:

Լինելով Միացյալ Նահանգների գլխավոր ռազմավարական գործընկերը Արեւելյան Միջերկրականում, Միջին Արեւելքում եւ Կենտրոնական Ասիայում՝ այսօր Թուրքիան փորձում է վերադարձնել տարածաշրջանում գլխավոր դերակատարի իր դիրքը: Եթե ներկայիս ժողովրդագրական միտումները շարունակվեն, երեք տասնամյակ հետո Թուրքիայի բնակչությունը կգերազանցի Ռուսաստանինը: Թուրքիայի ազդեցությունը մեծանում է ինչպես Բալկաններում, այնպես էլ նախկին Խորհրդային Միության ասիական երկրներում: Թուրքիան շարունակում է ռազմաշունչ եղանակով առաջ տանել Եվրամիությանն անդամակցելու իր պահանջը՝ միեւնույն ժամանակ անտեսելով Արեւմուտքի հազիվ լսելի պահանջները՝ վերջ տալ երկրի արեւելյան հատվածում քրդերի դեմ շարունակվող դաժան պատերազմին, որն արդեն իսկ մոտ 30000 կյանք է տարել:

Էլ ավելի անընդունելի է Թուրքիայի դիրքորոշումը Կիպրոսի վերաբերյալ, որը բռնագրավվել է 1974 թվականին եւ մինչ օրս վերահսկվում է 35000 թուրք զինվորների կողմից: Բռնագրավելով Կիպրոսի երկու հինգերորդը՝ Թուրքիան, հավատարիմ մնալով մարգարեի եւ խալիֆների լավագույն ավանդույթներին, հրամայել է այդ շրջանը բնակեցնող հույներին հեռանալ 24 ժամվա ընթացքում: Հույների տները եւ բիզնեսը փոխանցվել են թուրք կիպրոսցիներին: Հունական գյուղերն ու քաղաքները հարձակման են ենթարկվել: Խառը բնակչություն ունեցող վայրերում որպես առաջնահերթ թիրախ են ընտրվել եկեղեցիները, որոնք կամ ոչնչացվել են, կամ էլ վերածվել մզկիթների: Այս ամենի արդյունքում սպանվածների թիվը հասել է չորս հազարի, անհայտ կորածներինը՝ 1600-ի: Կղզու բռնագրավված մասի ամբողջ հույն բնակչությունը տեղահանվել կամ պարզապես ոչնչացվել է: Կղզու 40%-ը, ներառյալ հերկելի հողերի 65, ջրային ռեսուրսների 60%-ը, հանքային հարստության երկու երրորդը, արդյունաբերության 70 եւ տուրիստական ենթակառուցվածքների 70%-ն անցել են թուրքերի տրամադրության տակ: Եթե այլ երկրներ նման անօրինությունների համար կդատապարտվեին, կենթարկվեին բազմա-

տեսակ էմբարգոների կամ կոմբակոծվեին, ապա Թուրքիան, լինելով Միջերկրականի տարածաշրջանում Միացյալ Նահանգների հիմնական սյունը եւ նավթով հարուստ Կասպիցի ավազանը վերահսկելու ամենահարմար հենարանը, երբեք նման խնդիր չունեցավ: Թուրքիայի՝ որպես ԱՄՆ հիմնական գործընկերոջ դիրքերն ավելի ամրապնդվեցին 1979-ին, երբ Իրանում տեղի ունեցած հեղաշրջումը շփոթության մեջ զցեց Միջին Արեւելքում Միացյալ Նահանգների ռազմավարությունը: Թուրքերն անողքաբար շահագործեցին մեզ օգտակար լինելու իրենց ենթադրվող դերը:

Գրեթե 25 տարի անց Վաշինգտոնում ընդունված այն կարծիքը, թե Թուրքիան կմնա «աշխարհիկ» եւ «արեւմտամետ», մեղմ ասած, համոզիչ չէ եւ ստիպում է մեզ քննության առնել նման եզրակացության օրինաչափությունը: Ի՞նչ տեղի կունենա, եթե պատմությունը կրկնվի եւ Անկարան գնա Թեհրանի ճանապարհով՝ փակելով Ամերիկայի ճանապարհը դեպի Կասպիցի ավազան, եւ իր ազդեցության ոլորտի մեջ առնի Ամերիկայի նոր կլիենտներին Սարաեւոյում, Տիրանայում կամ Պրիստինայում: Հնարավոր է դա արդյոք: Կարո՞ղ է արդյոք պատահել այնպես, որ Միացյալ Նահանգները դարձյալ անակնկալի գա: Ի՞նչ է պետք անել՝ իրար թուրքությունների նման զարգացմանը նախապատրաստվելու համար:

Այն, որ Վաշինգտոնը չունի լրջորեն մշակված «թուրքական» քաղաքականություն, պարզ դարձավ 1997թ. մայիսին, երբ թուրքական բանակը շատ անսպասելի եւ կտրուկ ձեւով պաշտոնաթող արեց Էրբաքանին՝ ժողովրդավարական ճանապարհով ընտրված երկրի վարչապետին: Այս քայլը ողջունվեց Քլինթոնի վարչակազմի կողմից՝ որպես իսլամական արմատականության պարտություն եւ «արեւմտամետ» ճամբարի հաղթանակ: Քաղաքական իրողությունների եւ քայլերի իրավական կամ պատշաճ լինելու մասին Վաշինգտոնում դատում են՝ բացառապես ելնելով այն բանից, թե որքանով ցանկալի կարող է լինել այս կամ այն իրողության կամ քաղաքական քայլի հետեւանքը, այլ ոչ թե այնպիսի սկզբունքներից, ինչպիսին է, օրինակ, ժողովրդավարությունը:

Եթե մենք իսկապես մտադիր ենք լրջորեն քննարկել Ամերիկայի երկարաժամկետ քաղաքականությունը Արեւելյան Միջերկրականի տարածաշրջանում, ապա Միջին Արեւելքով զբաղվող մեր փորձագետները պետք է դադարեն ձեւացնել, թե Թուրքիան ժողովրդավարական երկիր է: Ժամանակն է նաեւ գիտակցելու, որ Թուրքիայի ցանկացած իրական «ժողովրդավարականացում» կնշանակի նրա անդառնալի «իսլամացում», քանի որ, չնայած իր քաղաքական վերնաշենքերին, Թուրքիան իսլամի արժեքների վրա հիմնված պետություն է: Արժեքների, որոնք ժառանգել է Օսմանյան կայսրությունից: 1923թ. Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի ստեղծած ժամանակակից Թուրքիան ներկայացնում է ազգայնական գաղափարի «աշխարհիկ» տարբերակը: Ինչեւիցե, 1945թ. բազմակուսակցական քաղաքական համակարգի հաստատումը քաղաքական իսլամին վերարժեւորվելու հնարավորություն տվեց: Վերջին երեք տաս-

Նամայակների քաղաքական շարժումները ստեղծեցին «թուրքական-իսլամական սինթեզ»՝ ազգի իսլամական հայեցակարգ, որը, ունենալով օսմանյան արմատներ, փորձում է վերահաստատել թուրքական ազգայնականության օսմանյան-իսլամական հայեցակարգը: Դրա ապացույցն է այն, որ նշված շարժումները մերժում են ժամանակակից արեւմտյան կենսակերպը, արժեքները: Նրանց հաջողությունը բացատրվում է այն պարզ փաստով, որ թուրքերի ճնշող մեծամասնությունը մահմեդականներ են, այսինքն՝ դավանում են մի կրոն, որն ունի որոշակի արժեքային համակարգ:

Երկու այնպես, ինչպես նախքան ստացվող հսկայական եկամուտները չկարողացան լուծել խնդիրը Իրանում, որեւէ հիմք չկա ենթադրելու, որ առաջարկված մեծածավալ օտարերկրյա ներարկումները, աջակցությունը կամ այլ նմանատիպ միջամտությունը բարեհաջող ավարտ կունենան Թուրքիայում: Քենալականների «աշխարհիկության» երազանքը երբեք դուրս չի թափանցել զինվորականների եւ Ստամբուլում կենտրոնացած վերնախավի նեղ շրջանակից:

Այն, որ Թուրքիայի քաղաքական վերնախավը թույլ արմատներ է թողել ազգի մշակութային գիտակցության մեջ, այսօր նույնքան լուրջ խնդիր է, որքան Աթաթուրքի օրոք, եւ շատերի մտքում «իսլամ» կոչվող ննջող հրաբխի վերաբերյալ տրվող հարցը ոչ թե «եթե»-ն է, այլ «երբ»-ը: Քենալականների բավականին նեղ իշխող խավը այսօր իր ձեռքում է պահում Թուրքիայի դեկոր միայն Արեւմուտքի օրհնությամբ եւ բանակի կամքով: Այն, ինչ տեղի ունեցավ Թեհրանում, կարող է պատահել եւ Անկարայում, ընդ որում՝ հենց հաջորդ տասնամյակում: Այս համեմատությունը պետք է գիտակցվի որպես ահազանգ: Ինչպես ժամանակին Իրանի շահը, այնպես էլ այսօր թուրք գեներալները ունեն Միացյալ Նահանգների օժանդակությունը, բայց խնդիրն այն է, որ վերելից հրահանգվող մոդեռնիզացումը դեմ է առել ներքեւից բարձրացող եւ կրոնական դրսեւորում ստացած մերժողական տրամադրություններին, որոնք պարարտ հող են ստեղծել իսլամի համար:

Ներքին ճնշումներից անբաժանելի են նաեւ Անկարայի արտաքին հավակնությունները: 1996թ. հունվարին Անկարան վիճարկեց Հունաստանի իրավունքները Իմիա կղզու վրա: Վեց ամիս անց Թուրքիան պահանջեց Կրետե կղզու կողքին գտնվող, հունական Գավդոս կղզին, որը թուրքական ափից 240 մղոն հեռավորության վրա է: Եվ սա այն երկիրն է, որն ուզում է Եվրամիությանն անդամակցելու թույլտվություն ստանալ եւ որը շարունակում է հեղեղել Գերմանիայի եւ Եվրոպայի այլ երկրների արդեն իսկ իսլամացած փողոցները՝ առաջարկելով էժան թուրքական աշխատուժ:

Յուրաքանչյուր անցած տարին ավելի ու ավելի անհետաձգելի է դարձնում Միացյալ Նահանգների կառավարության՝ անմիտ թուրքասիրությունից հրաժարվելու անհրաժեշտությունը: Ժամանակն է վերջապես,

որ Վաշինգտոնում հասկանան, թե Ամերիկյան այլընտրանքային սցենարի կարիք ունի: Մենք արդեն տեսել ենք, թե աշխարհի այս հատվածում ինչպես են մեր երբեմնի բարեկամները վերածվում թշնամիների: Ժամանակն է մշակել իրատեսական ծրագրեր: Եվ հետո, եկեք վերջ տանք ինքնախաբեությանը: Շողոքորթելով եւ հուսադրելով հնարավոր չէ ստիպել այլ ազգերին դառնալ այն, ինչ մենք ենք ուզում, որ նրանք դառնան:

(Թարգմ. անգլերենից)

* Սթենֆորդի համալսարանի **Պատերազմի, հեղափոխության եւ խաղաղության Հուվերի** հաստատությունը հայտնի է ինչպես իր գրադարանով եւ արխիվներով, այնպես էլ տնտեսագիտական եւ քաղաքագիտական ուսումնասիրություններով: Հաստատությունը հիմնվել է 1919թ. Հերբերտ Հուվերի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների 31-րդ նախագահի կողմից: Սկզբնական շրջանում այն իրենից ներկայացրել է Առաջին աշխարհամարտին վերաբերող փաստաթղթերի մի եզակի հավաքածու, սակայն շատ արագ դարձել է 20-րդ դարում աշխարհի քաղաքական, տնտեսական եւ հասարակական գործընթացների ուսումնասիրությունների աշխարհի ամենամեծ արխիվը եւ հարստագույն գրադարաններից մեկը: Ընդլայնելով իր գործունեության ոլորտը եւ իր կազմում ընդգրկելով մի խումբ ճանաչված գիտնականների՝ հաստատությունը դառնում է նաեւ Միացյալ Նահանգներում առաջին «թինք թենքերից» մեկը: Հուվերի հաստատության վաթսուներեք աշխատակիցները՝ տնտեսագետներ, քաղաքագետներ, իրավագետներ, միջազգային հարաբերությունների մասնագետներ, զբաղվում են ինչպես այժմեական, այնպես էլ պատմական խնդիրներով: Նրանց թվում են չորս Նոբելյան մրցանակակիրներ, Ամերիկյան արվեստի եւ Գիտության ակադեմիայի տասնինը անդամներ եւ այլ մրցանակներ ունեցող բազմաթիվ անձինք: Հաստատությունը համագործակցում է ինչպես ամերիկյան, այնպես էլ արտասահմանյան ճանաչված գիտնականների հետ: